29 ՅՈՒՆԻՍ 1999 ԵՐԵՔՇԱԲԹԻ #119 (1864)

Azg
armenian daily

Ամենայն հայոց հայրապետի վիճակը շարունակում է մնալ շատ ծանր

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի առողջական վիճակը հունիսի 28-ին, ժամը 18-19.30-ի միջեւ սկսեց վատթարանալ: Այնուհետեւ Նորին սրբության կացությունը փոքր-ինչ բարվոքվեց:

Այդ ընթացքում Մայր աթոռի միաբանները խմբված Վեհափառ հայրապետի սնարի շուրջ եւ Մայր տաճարի սրբազան կամարների ներքո աղոթում էին հայոց հայրապետի համար:

Վեհափառ հայրապետի վիճակը շարունակում է մնալ ծանր:

Վերստին հրավիրում ենք մեր հավատացյալ ժողովրդին աղոթել վասն հայոց հայրապետի:

Մայր աթոռի մամլո դիվանը հայտնում է նաեւ, որ հուլիսի 2-ին Ս. Էջմիածին կժամանի կարդինալ Էդվարդ Իդրիս Կասիդին, որը կբերի Հռոմի Հովհաննես Պողոս Բ պապի նամակը ուղղված Վեհափառ հայրապետին: Սրբազան քահանայապետը «իր եղբայրական եւ հոգեւոր մտերմությունն է ցանկանում արտահայտել» Ամենայն հայոց կաթողիկոսին:

ՍԿԱՆԴԱԼ

ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի աշխատասենյակում լսող սարք է հայտնաբերվել

ԵՐԵՎԱՆ, 28 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ ՍՅՈՒՆԻՔՅՈՒՆ. ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի աշխատասենյակում լսող սարք է հայտնաբերվել, հայտնում է «Ազատություն» ռադիոկայանը. նշելով, որ փաստը նրա աշխատակազմում հաստատեցին եւ չհերքեցին նաեւ ԼՂՀ Ազգային անվտանգության վարչությունում: Ինչպես վկայում է ռադիոկայանը, այդ մասին ասել է նաեւ Ա. Ղուկասյանը հունիսի 24-ին կառավարության անդամների մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ: Ինչպես հայտնի է, նույն օրը հունիսի 24-ին Ա. Ղուկասյանը անսպասելի հրամանագրով պաշտոնից ազատել էր վարչապետ Ժիրայր Պողոսյանին: Ղարաբաղի իշխանամետ շրջաններում խոսում են, որ «ժուչոկի» պատվիրատուն Ժ. Պողոսյանն է եղել: Հունիսի 28-ին, պատասխանելով «Ազատության» թղթակցի հարցին, Ժ. Պողոսյանն ասել է, որ նախագահի հունիսի 24-ի խորհրդակցությանը չի մասնակցել, «ժուչոկի» մասին ոչինչ չի լսել, ոչ մի տեղեկություն չունի, հետեւաբար ոչ մի մեկնաբանություն չի կարող տալ:

Համաձայն ռադիոկայանի ունեցած տվյալների, լսող սարքը տեղադրել է Վահրամ Թամրազյան անունով մի երիտասարդ, որը Ստեփանակերտում էլեկտրատեխնիկայի լավ մասնագետ է համարվում ու սովորաբար նա է կարգավորում բարձր պաշտոնյաների հեռուստացույցներն ու կենցաղային էլեկտրոնիկայի այլ սարքավորումները: Կարելի է ենթադրել, որ Վահրամը ինչ-որ գործով եղել է Ա. Ղուկասյանի աշխատասենյակում եւ օգտվելով առիթից տեղադրել «ժուչոկը»: Շշոտված տեղեկությունների համաձայն, նա ձերբակալված է:

Ոչ պաշտոնական, այլ իրազեկ աղբյուրներից **«Ազգը»** վերստուգեց ԼՂՀ նախագահի աշխատասենյակում լսող գաղտնի սարքի հայտնաբերման մասին տեղեկության ստույգ լինելը: **«Ազգը»** տեղեկացավ նաեւ, որ նշված փաստի առթիվ սկսվել է հետաքննություն, որի արդյունքը խոստանում է հույժ հետաքրքրական լինել, քանզի առաջին անգամն է, որ Լեռնային Ղարաբաղի թե Հայաստանի Հանրապետություններում նման բարձրաստիճան պետական պաշտոնյայի մոտ նման սարք է հայտնաբերվում կամ, ավելի ճիշտ, հայտնաբերման մասին տեղեկություններ են ստացվում:

ՀԱՐԿԱՀԱՎԱՔ

Ո՞վ է ծածկելու ՀՀ պետբյուջեի դեֆիցիտը

Բանկերն ու շեղումները՝ «միշտ պատրաստ»

ՆԱԲԻԼԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Ըստ պաշտոնական հայտարարությունների՝ հայաստանյան պետբյուջեի դեֆիցիտը 20 մլրդ դրամից փոքր-ինչ ավելին է, թեեւ էկոնոմիկայի ներկայիս նախարար, նախկին վարչապետ Արմեն Դարբինյանն իր պաշտոնափոխությունից անմիջապես հետո հայտարարեց, թե ինքը գործ է ունեցել 40-45 մլրդ դրամ դեֆիցիտի հետ: Այսօր իրազեկ աղբյուրները կառավարության եւ բանկային շրջանակներից հավաստում են, որ պետբյուջեի դեֆիցիտը մոտենում է 60 մլրդ դրամի, այսինքն շուրջ 110 մլն դոլարի, եւ ոչ թե 60 մլն դոլարի: Նախկին կառավարությունը փաստացի սնանկ է դարձել պետական գանձանակը: Դեֆիցիտը ծածկելու համար պետբյուջեն նախատեսում է երկու աղբյուր՝ հարկային եւ ոչ հարկային:

Հարկային եկամուտների հավաքագրման դեռեւս չմոռացված մեթոդների ի հայտ գալու մասին «Ազգն» արդեն ծանուցել է այսպես կոչված չարաբաստիկ կանխավճարները, որ պարտադրվում են հիմնականում փոքր ու միջին ձեռներեցներին, բայց քանզի Հայաստանում փոքր ու միջին ձեռներեցությունը մի փոքրիկ կղզյակ է, այդ կղզյակից հավաքած միջոցները բնավ բավարար չեն լինի փակելու նվազագույն անհրաժեշտ ընթացիկ ծախսերը:

Դեֆիցիտի ծածկման դրամաշնորհային աղբյուրը Համաշխարհային բանկից եւ Միջազգային արժութային հիմնադրամից ստացվելիք վարկերը տրամադրվելու դեպքում անգամ Հայաստան կհասնեն աշնանը:

Տես էջ 3



ՀԱՄԱՌՈՏ

ԼՂ նախագահը մտադիր է վերահսկել կառավարության բոլոր օղակների գործունեությունը

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 28 ՅՈՒՆԻՍ, ՍԼԱՐՔ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանի որոշումը ոչ միայն վարչապետին, այլեւ նախարարների կաբինետի ողջ կազմին պաշտոնազրկելու եւ իր կողմից ԼՂՀ կառավարության ղեկավարի գործառույթներն ստանձնելու վերաբերյալ վկայում է, որ նա մտադիր է իր վերահսկողության տակ առնել կառավարության բոլոր օղակների գործունեությունը: Այդ մասին հաղորդել է Լեռնային Ղարաբաղի պաշտոնական շրջանակներին մոտ աղբյուրը, որը չի բացառել նաեւ ԼՂՀ կառավարությունում լուրջ փոփոխությունների հնարավորությունը:

Վաշինգտոնում ԼՂՀ մշտական ներկայացուցչություն

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 28 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ամերիկայի Միացյալ Նահանգների իշխանությունների հետ պայմանավորվածությամբ, Վաշինգտոնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակայնության հետ կապերի բյուրոն վերակազմավորվում է ԱՄՆ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցչության: Ինչպես հաղորդում է ԼՂՀ ԱԳՆ մամլո ծառայությունը, դրա հետ կապված բյուրոյի տնօրեն Թեւան Պողոսյանը եւս է կանչվել Ստեփանակերտ:

Վ. Օսկանյանը հանդիպումներ կունենա ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաների հետ

ԵՐԵՎԱՆ, 28 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը հունիսի 28-ին երկօրյա այցով ժամանել է Վաշինգտոն՝ ԱՄՆ վարչակազմի, Պետդեպարտամենտի, Կոնգրեսի եւ գործարար շրջանների ներկայացուցիչների հետ երկկողմ հանդիպումներ անցկացնելու:

Տարածվում է, որ Վարդան Օսկանյանը հանդիպումներ է ունենալու ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթի, պետքարտուղարի հատուկ խորհրդական եւ հատուկ հանձնարարությունների դեսպան Ստեֆեն Սեստանովիչի, ԵԱՀԿ Մինսկի խմբում ԱՄՆ ներկայացուցիչ Դոնալդ Կայզերի եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Ինչպես հաղորդում է Վաշինգտոնում Հայաստանի հանրապետության դեսպանությունը, Վարդան Օսկանյանը Վաշինգտոն է ժամանել Լոս Անջելեսից, որտեղ նա հանդիպումներ է ունեցել Ամերիկայի հայ համայնքի ղեկավարների հետ եւ ճնարկել 1999 թվականի սեպտեմբերին Երեւանում կայանալիք Հայաստան-Սփյուռք համաժողովի նախապատրաստությանն առնչվող հարցեր:

Այսօր կհրապարակվի Օջալանի դատավճիռը

ԱՆԿԱՐԱ, 28 ՅՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Թուրքիայի անվտանգության գլխավոր վարչության ղեկավարության կարգադրության համաձայն, երկրում անվտանգության եւ իրավակարգի ապահովման լրացուցիչ միջոցներ են ձեռնարկվում Քրդական աշխատավորական կուսակցության առաջնորդ Աբդուլլահ Օջալանի գործով երեքշաբթի օրը կայանալիք եզրափակիչ դատական նիստի առնչությամբ: Բոլոր 80 նահանգների նահանգապետներին եւ հատուկ ծառայությունների ղեկավարներին հանձնարարված է ուժեղացնել պարեկումը մարդաշատ վայրերում, առեւտրական կենտրոններում, որոշեցի թույլ չտվեն փոքր զրոհայինների ահաբեկչական գործողություններ, այսօր հայտնել է տեղական հեռուստատեսությունը:

Թուրքիայի բնակչության գերակշռող մեծամասնությունը այն կարծիքին է, որ Թուրքիայում «թիվ 1 ահաբեկիչ» հայտարարված Օջալանի նկատմամբ պետք է մահավճիռ կայացվի:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄԻՋԱԳԵՊ

Ադրբեջանի նպատակը բանակցություններից խուսափելն է

Հունիսի 14-ին մարտակերտյան հատվածում տեղի ունեցած սահմանային միջադեպը թերեւս հեռու է զուտ ռազմական լոկալ գործողություն լինելուց: Դրա քաղաքական նպատակադրությունը մեր թղթակցի խնդրանքով մեկնաբանում է ԼՂՀ ԱԳՆ մամլո քարտուղար Լեոնիդ Մարտիրոսյանը. «Ակներեւ է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության վերջին առաջարկությունները դժվար կացության մեջ են դրել Ադրբեջանի ղեկավարությանը, որի քաղաքականությունը շարունակում է խարսխվել դարաբաղյան հիմնախնդիրը ուժային մեթոդներով լուծելու հիմքի վրա: Միջադեպը պարզապես կառուցողական երկխոսությունից խուսափելու, սահմանային խախտում հրահրելու միջոցով ԵԱՀԿ-ին եւ միջազգային հանրությանն ընդհանրապես ապակողմնորոշելու նպատակ էր հետապնդում: Հաստատական է, որ Ադրբեջանի նախագահի քաղաքական հարցերով խորհրդական Վ. Գուլուզադեն այդ միջադեպը չի որակել որպես հրադադարի խախտում, թեեւ պաշտպանության նախարար Ս. Աբիեւի մինչ այդ արված ռեւանշիստական հայտարարությունները հույժ պատերազմահոտ էին:

Ճիշտ կռահելով այդ հերթական սադրանքի բուն նպատակը, ինչպես նաեւ իրավիճակի հետագա ուժգնացումը կանխարգելելու համար ԼՂՀ արտգործնախարար Ն. Մելքումյանը հունիսի 16-ին նամակ էր հղել ԵԱՀԿ գործող նախագահ Կնուտ Վոլեբեկին խնդրելով ԼՂՀ եւ Ադրբեջանի զինված ուժերի ուժման գծի հիշյալ հատվածում անցկացնել «ճգնաժամ-դիտարկում»: Ինչպես գիտեմ, ԵԱՀԿ-ն ընդառաջեց այդ խնդրանքին եւ հունիսի 24-ին կազմակերպեց նման դիտարկում, որի նախնական արդյունքներն արդեն հայտնի են: Խմբի անդամներն անձամբ տեսան ու համոզվեցին, որ ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերի տեղաշարժ չի եղել, ընդհակառակն, առկա էր ադրբեջանական դիրքերի նկատելի առաջշարժում:

Հակամարտությունը բացառապես խաղաղ միջոցներով լուծելու Ադրբեջանի ղեկավարության անպատրաստվածությունը դրսեւորվեց եւս մի փաստով, այն էլ ԵԱՀԿ ներկայացուցիչների աչքի առաջ:

Այսուհանդերձ, բանակցություններից խուսափելու ոչ մի սադրիչ ձեռնարկում չի կարող դարաբաղյան կողմին հեռացնել հարցի տարաբանական մոտեցումից՝ հիմնախնդրի կարգավորման ուղին բանակցությունների սեղանն է: Եվ մենք հետեւողականորեն կգնանք դրան»:

Զրույց առավ
ԳԵՎՈՐԳ ԳԱՐԳԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Սամվել Ավետիսյանը դարձյալ հաղթեց

Սամվել Ավետիսյանը, որ թիվ 15 ընտրատարածքի մեծամասնական ընտրությունների արդյունքներով 120 ձայնի տարբերությամբ հաղթել էր իր մերձակա մրցակցին, ՍԴ-ում տոնեց իր կրկնակի հաղթանակը. Սահմանադրական դատարանը, լսելով դիմող եւ պատասխանող կողմերի փաստարկները, որոշեց բավարարել հաղթած թեկնածուի պահանջը՝ մեկով համալրելով պատգամավորների թիվը խորհրդարանում, եւ չեղյալ հայտարարեց Երեւանի ՄԸՀ որոշումը թիվ 15-ի ընտրություններն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Այդ ընտրատարածքի 0187/15 ընտրատեղամասում առկա էին 2 տարբեր ամփոփիչ արձանագրություններ, որոնցից մեկն ստորագրված էր տեղամասային հանձնաժողովի 7, մյուսը՝ 3 անդամների կողմից՝ անձնագրերի եւ մարված քվեաթերթիկների վերաբերյալ տարբեր տվյալներով: Առաջինում նշված էր 15 անվավեր, 120 պակասող քվեաթերթիկ եւ 714 մարված քվեաթերթիկ, երկրորդում՝ 203 անձնագիր եւ 835 մարված քվեաթերթիկ (մարված քվեաթերթիկների փաթեթն անհայտ կորել էր, թեպետ դատախազությունը պարզել է, որ իրականությանը համապատասխանում է 835-ը):

ՍԴ պահանջով երեկ ներկայացված դատախազության ուսումնասիրության արդյունքները փաստել էին, որ ընտրությունների իրական պատկերն արտացոլված էր հանձնաժողովի մեծամասնության, այդ թվում նախագահի կողմից ստորագրված արձանագրության մեջ, իսկ երկրորդ արձանագրությունը կազմելու ոչ անհրաժեշտություն, ոչ իրավական հիմքեր չկային: Ավելին՝ երկրորդ արձանագրությունը կազմվել էր օրենսգրքի պահանջների՝ քվեարկության ավարտից մինչեւ անձնագրերի վերաբերյալ արձանագրության կազմումը նիստի շարունակականության խախտումով, հետեւաբար, չի կարող ընտրված թեկնածուին որոշելու օրինական հիմք ծառայել: Ըստ այդմ, հիմք ընդունելով օրենքով սահմանված կարգով կազմված, հանձնաժողովի 7 անդամների կողմից ստորագրված եւ ըստ պատշաճի վավերացված արձանագրությունը, հաշվի առնելով, որ մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվը հիշյալ տեղամասում 835 էր, անձնագրերի թիվը համապատասխանաբար՝ ոչ թե 117, այլ 4, ընտրատարածքում ամբողջությամբ՝ 90, ինչը չի գերազանցում առավելագույն ձայներ ստացած թեկնածուների ձայների տարբերությանը (120), իսկ ընտրություններն անվավեր ճանաչելու այլ բավարար հիմքեր չկան, ՍԴ-ն ավետեց Սամվել Ավետիսյանի հաղթանակը:

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ

ՍԴ-ը «Հայրենիքի» արդյունքներին չի հավատում

Երեկ Սահմանադրական դատարանը շարունակեց մայիսի 30-ի ընտրություններում մեծամասնական ընտրակարգով Երեւանի 15-րդ ընտրատարածքում առաջադրված Սամվել Ավետիսյանի եւ Արարատի 39-րդ ընտրատարածքում առաջադրված Կիմիկ Մարտիրոսյանի դիմումների (առաջինը պահանջում էր անվավեր ճանաչել Երեւանի ՄԸՀ որոշումը ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ. երկրորդն. ընդհակառակն՝ անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները). ինչպես նաեւ համամասնական ընտրությունների արդյունքները «փաթեթով» չեղյալ համարելու Էդվարդ Եգորյանի պահանջի քննարկումը:

Էդվարդ Եգորյանը դարձյալ պարտվեց

Էդվարդ Եգորյանի, հանձին նրա՝ «Հայրենիք» դաշինքի «բախտը» ՍԴ-ում էլ չբերեց: Համամասնական ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու օգտին բերված մոտավոր փաստարկները չհամոզեցին «բարձր դատարանին» (ՍԴ-ին այդպես են դիմում դիմող եւ պատասխանող կողմերը): Եգորյանի վկայակոչած արձանագրությունների պատճեններն օրենքով սահմանված կարգով կնքված ու վավերացված չէին (սա բացատրվեց արձանագրությունները ստանալու անհաղթահարելի խոչընդոտներով եւ ժամանակի սղությամբ), զուրկ էին որոշակիությունից: Անձնագրերի անհայտ մեթոդով հաշվարկված թիվը, որ, ըստ Եգորյանի, 166468 էր, ներառում էր «կասկածելի» ընտրատեղամասերի ընտրողների թիվը, ինչն անձնագրերի հետ նույնացվել, բնականաբար, չի կարող, դիմումում նշված «աղօրինի» արձանագրություններից ավելի քան 80-ը կրկնվում էին:

Համոզիչ չհամարվեց նաեւ ընտրացուցակային խառնաշփոթի պատճառով ընտրություններին մասնակցելու հնարավորությունից զրկված քաղաքացիների ենթադրյալ թիվը՝ 200 հազար, որն այդպես էլ չհիմնավորվեց: Դիմող կողմն, ըստ էության, հույսը դրել էր ՍԴ-ի «բարի կամքի» վրա՝ ակնկալելով, որ վերջինս կավարտի «Հայրենիքի» սկսած գործը՝ համադրելով արձանագրությունների բազմությունը, ստուգելով եւ ճշտելով անձնագրերի թիվն ամբողջ հանրապետության տարածքում:

Դիմող կողմի՝ պատասխանող կողմին (ԿԸՀ-ին) ուղղված «մեղադրանքներից» մեկը օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունները գերազանցելն էր. ԿԸՀ անդամները, ամփոփիչ (թիվ 7) եւ անձնագրություններն արտացոլող (թիվ 8) արձանագրությունների միջեւ ակնհայտ հակասություններ, անձնագրությունների անտրամաբանական տվյալներ նկատելու պարագայում մարզային հանձնաժողովներին «ստիպել» էին ստուգել հիմքերը՝ թիվ 1-6 արձանագրությունները եւ ճշտել ԿԸՀ ներկայացված տվյալները, ինչը, Եգորյանի համոզմամբ, ընտրությունների արդյունքներն ըստ «պահանջի» վերածելու հնարավորություն է հանձնաժողովի համար: Պատասխանող կողմը («Միասնության», Դաշնակցության եւ Կոմկուսի ներկայացուցիչներ) առարկեց պնդելով, թե անձնագրերի մեծ թիվը ոչ միայն չէր հակասում, այլեւ համապատասխանում էր առավելագույն ձայներ ստացած կուսակցությունների շահերին, քանզի, ավելացնելով 5 տոկոսի արգելքը հաղթահարելու համար անհրաժեշտ ձայների թիվը, նվազեցնելու էր խորհրդարան մուտք գործած կուսակցությունների թիվը՝ համապատասխանաբար մեծացնելով իրենց ստացած մանդատների քանակը: Այնպես որ, անձնագրությունների թիվը ողորկելու պատճառ չկար:

Առավել էական է, թերեւս, որ Ընտրական օրենսգիրքն անձնագրությունների պատճառով համամասնական ընտրություններն ամբողջությամբ անվավեր ճանաչելու հնարավորություն չի նախատեսում. եթե քննարկման ենթակա լիներ իրականությանը, ասենք, «Հայրենիքի» ստացած ձայների (1,24 տոկոս) անհամապատասխանության խնդիրը, խոսակցությունն առարկայական կլիներ՝ ի տարբերություն ՍԴ-ին պարտադրված «անձնագրությունների շուրջ» մոտավոր քննարկումների: Կողմերի այս եւ այլ նկատառումները, եզրափակիչ ելույթներն ամփոփելով եւ արձանագրելով ընտրությունների կազմակերպման եւ անցկացման մի շարք թերություններ, ՍԴ-ը մերժեց Էդ. Եգորյանի պահանջը՝ գտնելով, որ վերջինս ամրապնդված չէ համամասնական ընտրություններն անվավեր ճանաչելու համար բավարար փաստերով:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒՄ

Տիգրան Հակոբյանը՝ կառավարության աշխատակազմի մամուլի վարչության պետ

Տաբած քարը գետնին չի մնում. այս ասացվածքը եկավ միտս, երբ երեկ հայտնի դարձավ Հայաստանի վարչապետի որոշումը՝ Տիգրան Հակոբյանին կառավարության աշխատակազմի մամուլի եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ նշանակելու վերաբերյալ: Այս անունը նոր չէ հայաստանյան մամուլում, եւ անկախությունից ի վեր Տ. Հակոբյանին վիճակվել է միշտ լինել տեղեկատվական ամենապատասխանատու հաստվածներում:

Տիգրան Ռաֆիկի Հակոբյանը ծնվել է 1960 թվականին Երեւանում, ծառայողի ընտանիքում: Սովորել է Ե-

րեւանի պետական համալսարանում, այնուհետեւ փոխադրվել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրական ինստիտուտ, որի գեղարվեստական թարգմանության բաժինն է ավարտել 1988 թվականին: 1988-1990 թթ. աշխատել է «Կոմունիստ» հանրապետական թերթում: 1990 թվականին, երբ ստեղծվեց «Ռեսպուբլիկա Արմենիա» խորհրդարանական պատգամավորությունը, Տ. Հակոբյանը դառնում է նրա քաղաքական բաժնի խմբագիրը. 1991-92 թթ. այդ թերթի գծով «Հայաստանի Հանրապետություն» պատգամավորության գլխավոր խմբագրի տեղակալ («ՌԱ»-ն այդ ժամանակ «ՀՀ»-ի ռուսալեզու կրկնօրինակն էր): 1992-93 թթ. Տ. Հակոբյանը «ՌԱ» արդեն ինքնուրույն թերթի գլխավոր խմբագիրն էր: 1993 թ. մարտից մինչեւ 1995 թ. հուլիսն աշխատել է որպես ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների պետական վարչության պետ, եղել է կառավարության անդամ: Մամուլի պնդմամբ, այդ պատճառից նրան ազատելու պատճառը եղավ այն, որ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հեռուստաելույթի կրկնությունը տեւեց մինչեւ ընտրությունների օրվա ժամը 0 ժամ 25 րոպեն, մինչդեռ օրենսդրությունն արգելում է նախընտրական քարոզչությունն այդ օրը:

1995 թ. հոկտեմբերից մինչեւ անցյալ տարվա հունվարն աշխատել է Արմենպրես պետական լրատվական գործակալության տնօրեն, 1996 թ. հունիսից նոյեմբերն եղել է ՀՀ տեղեկատվության նախարարության կոլեգիայի անդամ, 1997 թ. հունվարին հիմնադրել է «24 ժամ» շաբաթաթերթը եւ մինչեւ 1998 թ. հունվարը նրա հիմնադիր խորհրդի նախագահն էր: Թե պետական հեռուստատեսությունում, թե Արմենպրեսում Տ. Հակոբյանը, աշխատակիցների վկայությամբ, կարեւոր դեր է խաղացել տեխնիկական վերազինման, ստեղծագործական կայացման գործում: 1998 թ. մարտից մինչեւ այս տարվա փետրվարը խմբագրել է Հայոց համազգային շարժում կուսակցության «Հայք» պատգամաթերթը: Անցյալ տարվա դեկտեմբերին Երեւանի մամուլի ակումբը «Հայքին» շնորհեց իր ամենամյա մրցանակը «1998 թ. լավագույնս կերպարանափոխվելու համար»:

Դուրս գալով «Հայք» թերթի խմբագրությունից, Տ. Հակոբյանը հիմնեց «Իմիջ» հասարակական կապերի կենտրոնը, որի հիմնական պատվերը եղավ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու Խաչատուր Սուքիասյանի նախընտրական արշավի կազմակերպումը: Տ. Հակոբյանը եղավ «ՍԻԼ-գրուպի» նախագահի նախընտրական շտաբի ղեկավարը: Վերջերս «Առավոտ» օրաթերթում լույս տեսած հարցազրույցում Տ. Հակոբյանը հայտարարեց լրագրությունը վերջնականապես լքելու իր որոշման մասին...

Հետաքրքրական է, որ Տ. Հակոբյանը երբեք չի թաքցնում իր համակրանքը ՀՀՇ-ի գաղափարախոսության նկատմամբ, սակայն այդ կուսակցությանը անդամագրվեց միայն վերջին կողմից իշխանությունը կորցնելուց հետո անցյալ տարվա սեպտեմբերին: Մարտի 6-ին այդ կուսակցության 11-րդ համագումարում ընտրվել է ՀՀՇ վարչության անդամ եւ եռանդուն պատգամանել իր ընկերոջ՝ Վանո Սիրադեղյանի թեկնածությունը կուսակցության վարչության նախագահի պատգամնում ընտրվելու համար: 1991 թ. հոկտեմբերին քվեարկվել է Հայաստանի Գերագույն խորհրդի մասնակի ընտրություններում, սակայն չի ընտրվել: Տ. Հակոբյանն ամուսնացած է, ունի երկու դուստր եւ մեկ որդի:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ,
ԲՏԱՀ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

Արմեն Տեր-Սահակյանի գործով ամբաստանյալներից եւս մեկը հաստատեց իր մասնակցությունը սպանություններին

ԵՐԵՎԱՆ, 28 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Արմեն Տեր-Սահակյանի գործով հունիսի 28-ի դատական նիստում ամբաստանյալ Ալիկ Գրիգորյանը հավաստեց, որ ինքը մասնակցել է Աշտարակի շրջգործկոմի նախագահ Հովհաննես Սուքիասյանի եւ երկաթգծի վարչության պետ Համբարձում Ղանդիլյանի սպանություններին: Նա հայտնեց, որ ինքը երկրորդն է կրակել զոհերի վրա, առաջինի դեմքում Արթուր Ալոյանից, երկրորդի դեմքում Արշակ Շուխյանից հետո: Սպանությունների հանձնարարությունները տալիս էր Արմեն Տեր-Սահակյանը, որին հանձնարարության կատարման մասին զեկուցում էին, սակայն ինքը (Գրիգորյանը) տեղյակ չէ, թե ում էր պետք Սուքիասյանի կամ Ղանդիլյանի մահը: Ընդ որում, Ալիկ Գրիգորյանը սխալ համարեց իրեն ու իր գործընկերներին մարդասպան համարելը, որովհետեւ իրենք՝ ներքին գործերի զինվորները, ընդամենը հրաման են կատարել ազգային շահերից ելնելով: Նա սխալ համարեց նաեւ ներքին գործերի «օրինական» աշխատողներին բանդա կոչելը:

Վերջինը ամբաստանյալներից դատարանում ցուցմունք կտա Արմեն Տեր-Սահակյանը, որի հարցաքննությունը հետաձգվեց նրա պատճառով Անժելա Կարապետյանի խնդրանքով գործի նյութերին ծանոթանալու համար: Իսկ պատճառաբանելը նախ հայտարարեց, թե ինքը Հունան Ավետիսյանն է, ապա հայտարարեց, որ «Հիսլերը փախավ», իսկ իրեն որպես հայրենիքի դավաճանի բռնեցին: Ի պատասխան դատավոր Գագիկ Պողոսյանի «Միանո՞ւմ եք ձեր պատճառանի միջնորդությանը» հարցին, Տեր-Սահակյանը հայտարարեց. «Ես սաղին էլ միանում եմ»:

«Արտգավությունը հիմա պարտք չի համարվում»

Սովորաբար խուսափել ենք բժիշկներին (նաեւ՝ այլ մասնագետների) ուղղված շնորհակալագրեր տպագրելուց՝ համարելով, որ իրենց պարտքն են կատարել ընդամենը: Բայց երբ «պահանջատերը 70-ամյա միայնակ կենսաթոշակառու է, 50-ից ավելի տարիների աշխատանքային սաժով, «մազերն էլ ատոմակայանում են ճերմակել», դիմադրությունն անիմաստ է:

«Լավ վերաբերմունքը, առավել եւս՝ արտգավությունը հիմա պարտք չի համարվում, ասաց խմբագրության այցելուն՝ Նորիկ Թանդիլյանը, որովհետեւ մենք արդեն ապրում ենք «շուկա» կոչվածում: Երկրորդ բուժմիավորման պոլիկլինիկայում ես տեսա բժիշկների, որոնք ոչ միայն բանիմաց մասնագետներ են, այլեւ արտգավ մարդիկ, եւ նրանց մասին չի կարելի ասել, թե սոսկ իրենց պարտքն են կատարել: Ես խորապես զգացված եմ բժիշկներ Լիլյա Ավագյանի, Լյուսյա Օհանյանի, Լարիսա Հարությունյանի, Տավրոս Ղազանչյանի, Մարիանա Սուլուգյանի վերաբերմունքից: Եթե ես հիմա տեսնում եմ՝ նրանց շնորհիվ: Ես համոզված եմ, որ նրանք այդպես են վերաբերվում բոլորին», ավարտեց իր խոսքը պրն Թանդիլյանը՝ ցանկություն հայտնելով, որ այդ մարդկանց աշխատանքն ինչ-որ ձեւով գնահատվի: Սա արդեն առողջապահության նախարարությանն էր ուղղված:

Աղաքինման մաղթանք

Մեր թերթի հեղինակներից Հենրիկ Լիլոյանը շաբաթ օրը ենթարկվել է սրտի բաց վիրահատության: Շուտափույթ եւ կատարյալ աղաքինում ենք մաղթում մեր հարգարժան գործընկերոջը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի Խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեր 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Նյութը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձուում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՍՔԱՑԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Այդ ճնշված ու հալածված գործարարությունը

Թեհեյան կենտրոնում հավաքվել էր ազգային բուժուագիայի էլիտան

Երկրում սկսվել են հարձակումներ Հայաստանի գործարարության վրա, հարկային մարմինների կողմից ճնշումներ կան, եւ եթե գործարարությունը չհամախմբվի, նրա «վերջը եկել է»: Այսպիսի գորշ գույներով բնութագրեց իր ներկայիս վիճակը շաբաթ օրը Թեհեյան կենտրոնում հավաքված հայ ազգային բուրժուազիան: Նրա էլիտան, Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության խորհուրդը, որի մեջ մտնում են Հայաստանի համեմատաբար խոշոր «տրամաչափի» տնտեսական գործիչները, եկել էր ընտրելու ՀԱԳՄ «կորիզը» խորհրդի նախագահությունը, հաստատելու միության ղեկավար պաշտոնները, բյուջեն, տարեկան ծրագիրը եւ այլն:

Նախագահության նիստի ներկայացվածությունից եւ լրատվամիջոցների առատությունից արդեն երեւում էր, որ ՀԱԳՄ-ն փորձելու է ավելի ակտիվանալ եւ հասարակական հնչեղություն տալ իր գործունեությանը: Ի դեմ, վերջերս տեղի ունեցած ՀԱԳՄ երկրորդ համագումարն էլ աղացուցեց, որ միտումներ կան էլ ավելի ընդարձակելու միության խորհրդի կազմն ընդգրկելով մինչեւ այժմ նրա գործերին չմասնակցած խոշոր գործարարներին, տարբեր «ֆույր կազմակերպությունների» ղեկավարներին: Խորհրդի նիստը նախ հաստատեց միության հասարակական հանձնաժողովների նախագահներին: «ՍԻԼ» կոնցեռնի նախագահ, արդեն Աժ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը հաստատվեց միության արտաքին հարաբերությունների խորհրդի նախագահ, միության անդամ մեկ այլ Աժ պատգամավոր, «Տրաուս» բանկի նախագահ Հարություն Փամբուկյանը գործարարությանն առնչվող օրենսդրության վերլուծության եւ բարելավման, «Արդշինբանկի» խորհրդի նախագահ Լեւոն Ֆարմանյանը ֆինանսաբանկային ոլորտի եւ վարկավորման հարցերի, «Նուշիկյան» ասոցիացիայի նախագահ Գարեգին Նուշիկյանը սղաստարկման, առեւտրի եւ տուրիզմի ոլորտի հանձնաժողովի, ՀՀ ֆոնդային բորսայի նախագահ Սեդրակ Սեդրակյանը արժեթղթերի շուկայի եւ բորսայի գործերի... եւ այլոցով 21 բավականին հնչեղ եւ գործարարների համար խոսունմնալից անվանումներով հանձնաժողովներ ու նրանց, հասարակությանը ոչ անհայտ գործարար-արդյունաբերող նախագահների անուններ:

Գործարարները հաստատեց երկար կանգ առան միության նախագահության ընտրության վրա, քանի որ, ինչպես ծեւակերպեց ՀԱԳՄ նախագահ Արամ Վարդանյանը, այս նախագահությունը պետք է լինի առավել ներկայանալի, ուժեղ եւ ընդգրկի առավել հարգված, ճանաչված գործարարների, ովքեր հնարավորություն ու ցանկություն ունեն աշխատելու, ի տարբերություն ՀԱԳՄ նախորդ նախագահության, որտեղ կային նույնիսկ փախստականներ, ձերբակալվածներ, հրեածին տարրեր: Գեղարվեստորեն ասած՝ «ռեակտիվ» նախագահություն, որը եթե պետք է հավաքվի գիշերով, եթե պետք է հանդիպի վարչապետի հետ եւ ձեռը խփի սեղանին (՝) ու դնի իր պահանջները: Երկար քննարկումից հետո որոշվեց հաստատել միության 25 հոգանոց նախագահության տարբերակը, որի մեջ ընդգրկվեցին 21 հանձնաժողովների նախագահները, գումարած՝ 4 առավել ակտիվ գործարարներ: Ընդհանրապես ՀԱԳՄ անդամներն իրենց պահանջատիրության տեսակետից մեծ հույսեր են կապում Աժ «իրենց» պատգամավորների հետ, (12-ից միայն մեկը չի ընտրվել), նրանց մեջ տեսնելով գործարարության պաշտպանների ու դեսպանների, որոնք կոչված են լոբբիստական աշխատանք տանելու նորընտիր խորհրդարանում: Ինչ վերաբերում է նորընտիր Աժ-ին, ապա ՀԱԳՄ-ն հանձին Աժ-ի տեսնում է մի հզոր դաշնակցի, որի հետ պետք է պայքարի երկար քննարկման առարկա դարձավ բյուջեի եւ անդամավճարների չափի հարցը: Երկար-բարակ քննարկումներից հետո վերջապես հաստատվեց ՀԱԳՄ 43,6 մլն դրամի չափով տարեկան բյուջե (խոստովանենք միության անվանը ոչ այնքան հարմար մի թիվ) եւ տարեկան 1000 դոլար անդամավճար: Ընդունվեց նաեւ ՀԱԳՄ տարեկան գործունեության պետական ծրագիրը, որի թիվ մեկ դիրքը պետք է լինի հուլիսին հերթական հանդիպումները ՀՀ վարչապետի, Աժ նախագահի հետ՝ քննարկելու գործարարության խնդիրները: Հաստատվեցին նաեւ ՀԱԳՄ կից տնտեսական հարցերով միջնորդ դատարանի նախագահը (Սուրեն Մամիկոնյան) եւ միության պատգամաւորը «Գործարար շաբաթ» թերթի խմբագիրը (Վրեժ Սարուխանյան): Մի խոսքով ՀԱԳՄ խորհրդի նիստն անցավ նախօրոք կազմված սցենարի համաձայն, եթե հաշվի չառնենք նրա մի քանի անդամների որոշ զգացմունքային ռեցիդիվները, գործարարական հնդկահայ տնտեսական գործիչ Հովսեփ Սեֆերյանի, ֆոնդային բորսայի նախագահ Սեդրակ Սեդրակյանի: Իսկ ՀԱԳՄ նախագահ Արամ Վարդանյանի խոսքերը առավել բնութագրական են ՀՀ գործարար աշխարհի ներկա վիճակի համար՝ առայժմ ծեւավորված չէ գործարար խավը, այս խավի նկատմամբ դեռեւս չկա պատշաճ վերաբերմունք, «մենք հասարակությունից քված, մոռացված աղանդ չպետք է լինենք»: Այս հոռետեսական գնահատականների լուծման ուղիներին վերաբերող «Գունդ տրուս կոյի» նախագահ Հրանտ Վարդանյանն իր կարճ խոսքում առաջարկելով. «Եկեք մեզ դրսեւորենք այնպես, որ մեզ վերաբերվեն որպես այս երկրի պարկեշտ եւ հարգարժան քաղաքացիների»:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ

Հանապազօրյա հոգեւորի խնդիրը

Հարկ չկա խելոք երեւալ եւ փորձել դուր գալ մարդկանց, որոնցից մեկն էլ դու ես: Ես այս ժողովրդի մի մասն եմ, նրա, որ 1988-ին դուրս եկավ փողոց ու հրապարակ, ձեռքերը բռունցքեց ու բարձրացրեց, պահանջեց, գոչեց ընդդեմ անարդարության: Հասկացավ ու ըմբռնեց, որ հանապազօրյա հացը կարեւոր է, բայց աղահով աղրելուց կարեւոր բաներ էլ կան: Հացը նրա համար է, որ պահպանես մարմնդ ու պահանջես այդ կարեւոր բաները: Կա ազգ, կա ազգային խնդիր, կա ազգային նպատակ, մի խոսքով՝ կա գաղափար, կան սկզբունքներ:

Ինչպես ուզում եք դատեք, դատապարտեք, դատափետեք, ինձ համարեք վերամբարձ, իմ խոսքերը՝ անհարիր մեր օրվա խնդիրներին: Իսկ այն հացի խնդիրն է: Ժողովուրդը, հիմնական մասը, ասում են՝ մոտ 96 տոկոսը հացի խնդիր է փորձում լուծել: Նախ հաց, որ սնես մարմնդ, առա կարողանաս մտածել հոգեւոր աշխարհի մասին, փորձես կառուցել այն: Մի խոսքով՝ ասվածաշնչյան հանապազօրյա հացը: Հասկանում եւ ընդունում ենք:

Բայց այսօր այդ հացի խնդիրը կարծես որոշ չափով խեղաթյուրված է անդրադարձվում մեր պատկերացումներում: Տեսեք, տասը տարի առաջ (դեռ ավելին) մենք մեծ խորհրդային Միության մեջ ընկալվում էինք ամենաառաջավորը, առաջադիմականը ընդունող ժողովուրդ: Պատահական չէր, որ վերակառուցման առաջին հնչյունները մենք ողջունեցինք, անգամ սեփական մաշկագրինք, դարձրինք մերը, որովհետեւ խիստ հոգեհարազատ էին մեր նկարագրին: Դեռ ավելին, այլախոհ մարդկանց, քաղաքական գործիչներին, երբ ցանկանում էին ընդգրկել ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, մեզ էին առաջարկում նրանց ընտրությունը: Մենք էինք այն ընտրազանգվածը, որը ջատագով էր գաղափարի: Անդրեյ Սախարովը դարձավ յուրային ամենեւին ոչ այն պատճառով, որ առարկայական հարց էր լուծում: Կամ Գալինա Ստարովոյտովան: Նաեւ ուրիշները:

Այս ամենը բոլորին է հայտնի, եւ ես չէ, որ պետք է ասեմ կամ հիշեցնեմ:

Իսկ ի՞նչ կատարվեց եւ ի՞նչ է կատարվում մեր օրերում: Ազատ ու արդար ընտրապայքարում ժողովրդի ընտրյալները դարձան ոչ գաղափարի մարդիկ, այլ հիմնականում ալրաղացների տնօրեններ, այս կամ այն ճանապարհով փող կուտակածներ, նորելուկ հարուստներ: Ժողովուրդը նրանց գերադասեց: Ինչո՞ւ:

Եթե ասենք, թե գործեց զսպանակի օրենքը, կարծում եմ, դեռեւս ոչինչ ասած չենք լինի, ընդամենը կխուսափենք հարցից: Բայց հարցը կա՝ ուզենք թե չուզենք:

Գիտական, սոցիոլոգիական լուրջ հետազոտությունը, բնականաբար, մեր խնդիրը չէ, բայց որ ժողովրդի հոգեբանության, ազգի հոգեբանության մեջ այս տասը տարիների ընթացքում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ ու տեղաշարժեր, ժխտել չենք կարող: Խոսքը ծիծաղելի ու սխալի, լավի ու վատի մասին չէ բնավ: Եթե մարդկանց հավաքական կամքը դա է, ուրեմն հարցը ծեռք է բերում ճշմարտության մեկ այլ ասպեկտ ու որակ: Ուղղակի պետք է արձանագրենք, թե այդ ի՞նչ ուժ ուղղորդեց էքսոսին: Եվ ընդհանրապես, դեր խաղաց ուղղորդողի առկայությո՞ւնը, թե՞ նրա ուղղակի բացակայությունը:

Մենք կատարեցինք հեղափոխություն, շահեցինք ե՛ւ հեղափոխական, ե՛ւ պատերազմական մարտը, բայց այդ հաղթանակները ժողովրդի ենթագիտակցությամբ իրենը չդարձան: Չդարձրեցինք: Մարդու մեջ, նրա հոգեւոր մակարդակներում ու ոլորտներում ոչ միայն այդ հաղթանակները լամրացնվեցին, այլ գրանցվեց պարտություն պարտության եւ տեւից: Այնպես որ, մեր հաղթանակները՝ բարձր գաղափարական, ազգանպաստ եւ ազգանվեր մեր հաղթանակները, դեռեւս մերը չեն: Թերացանք այս հարցում: Այ, ա՛յս դեպքում կարող ենք խոսել զսպանակի օրենքի մասին. երեկ որքան գաղափարական ու ռոմանտիկ էինք, այսօր այնքան փորձում ենք լինել պրագմատիկ եւ ապրել նյութի օրենքներով:

Դեռ ավելին, ցանկացած հեղափոխություն ծնում է իր հերոսներին: Ովքե՞ր են մեր հերոսները: Իհարկե, կա՛ն այդ տղաները՝ հզոր հոգու, նկարագրի տեր մարդիկ: Բայց քանիսի՞ն գիտենք եւ ի՞նչ գիտենք նրանց մասին. կցկտուր մեկ-երկու բան, որը ժամանակի հետ կմոռացվի: Պետական հստակ քաղաքականություն չմշակվեց եւ չկիրառվեց այս ուղղությամբ: Հազար ու մի անպտուղ խորհրդաժողովական ընկերությունների վրա գումարներ ու միջոցներ են ծախսվում, բայց զլանում ենք ծախս անել եւ հրապարակել մեկ-երկու որակով գիրք ու կինոնկար Սոնթի, Բեկոր Ասոյի եւ այլոց մասին: Եվ ընդհանրապես, չծեւավորվեց համընդհանուր ժողովրդական գնահատանքի այն մթնոլորտը, որ մեծարեր իր զավակներին, մեծարեր նրանց սխրանքը, դրանով իսկ մեծարվեր գաղափարը, միտքը, անձնազոհությունը:

Դրան հակառակ ծաղկեց, փարթամորեն փթթեց կասկածանքի ծառը: Հանձինս դերակատարների, գեներալների, ոստիկանների տակ նետվեցին ազգային գաղափարները, ազնիվ մղումները: Արդյունքում՝ մեր իսկ ջանքերով ծեւավորվեց ժողովրդական համակրանքի այս նոր որակը:

Կկարողանա՞նք այսպես ծանապարհ գնալ, երկա՞ր կգնանք, ո՞ւր դուրս կգանք եւ ինչպե՞ս:

Չեմ կարծում, որ հացից, հանապազօրյա հացից պակաս կարեւոր է հանապազօրյա հոգեւորի խնդիրը:

ԳՈՌԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՐԿԱՀԱՎԱՔ

Ո՞վ է ծածկելու ՀՀ պետբյուջեի դեֆիցիտը

Սկիզբը էջ 1

Հիշեցնենք, որ ՄԱՀ-ի երկրորդ պատվիրակությունն է գալիք շաբաթ ժամանելու Երեւան, որպեսզի շարունակվեն նոր կառավարության հետ իրագործելիք տնտեսական խաղաղականության մանրամասները: Այս երկնակամարում առկա է միջին ամպամածություն. ուրբաթ էներգետիկայի նախարար Դավիթ Զադոյանը հրաժարվեց ստորագրել Համաշխարհային բանկի համաձայնագիրը դասագրքերի տպագրման համար: Հրաժարումը բացատրվեց «Միդլենդ» բանկի կողմից տրամադրվող տարեկան տոկոսադրույքների անբավարարությամբ՝ 4,5 տոկոս: Չմոռանանք, որ «Միդլենդի» տարեկան տոկոսադրույքը նոր մի բարձրագույն է, եւ այդ 4,5 տոկոս շահաբաժինը շատ ավելի վտահելի է, քան հայաստանյան մի շարք բանկերի տարեկան 20-24 տոկոսը: Բացի այդ՝ «Միդլենդ» բանկի միջոցով գործառնությունների իրականացումը Համաշխարհային բանկի պայմանագրով նախատեսված պայման է, ինչին նոր կառավարության հնարավոր անդամ Դավիթ Զադոյանը եւ վարչապետը խոչիրազեկ պետք է լինեին:

Օտարերկրյա ներդնողները եւս չեն ածպարում իրենց գումարները ներդնել Հայաստանում: Տարաբնույթ հիմնադրամների, ի մասնավորի «Լինսի» հիմնադրամի գումարները գրեթե սառեցված են՝ անորոշ հեռանկարով: Այս պարագայում դարձյալ մեղավորը հայաստանյան ծեռներեցներն են, որոնք չեն կարողանում բարձրաշխարհիկ բիզնես-ծրագրեր գրել, որ հաճո կլինեն ամենապահանջկոտ հիմքին:

Կենտրոնական բանկը բարձր սարի կատարին

Բյուջետային համակարգի մասին օրենքով արգելվում է պետբյուջեի դեֆիցիտը ծածկել Կենտրոնական բանկի միջոցների հաշվին, ուստի զինանոցում մնում է պետբյուջեի ֆինանսավորման յուրօրինակ մի աղբյուր՝ մասնավոր առեւտրային բանկերը: Երեկ ԿԲ-ում տեղի ունեցան «Ազգին» հայտնեցին, որ բանկիրներին առաջարկվել է գործնական ակտիվություն ցուցաբերել պետական կարճաժամկետ պարտատոմսերի՝ հատկապես երկարաժամկետ, շուկայում (ՊԿՊ): Իսկ ՊԿՊ-ների շուկայում ակնհայտ անդորր է: Ոչ միայն արտասահմանյան, այլեւ ներքին ներդնողներն ու բանկերը չեն շտապում մեծ ծավալի գնումներ կատարել: Բանկերին առաջարկելով (գուցե պարտադրելո՞վ) այս շուկայում նախանձախնդիր լինել՝ կառավարությունը հնարավորություն կտանան առագ գումարներ ներգրավել հրատապ բյուջետային ծախսերը փակելու եւ չվճարումների վտանգավոր բեռից խուսափելու համար: Բայց հարց է ծագում, արդյոք ՊԿՊ-ների շուկայում չե՞ն բարձրանա տոկոսադրույքները, ինչի արդյունքում պետությունը հարկադրված կլինի բանկ գնով գումարներ ծեռք բերել: Ռուսաստանի օգոստոսյան ճգնաժամի խորքային պատճառներից մեկը ՊԿՊ-ների շուկայում պետության ոչ հեռատես քաղաքականությունն էր՝ անընդհատ բարձր տոկոսներով գումարները ներգրավելու եւ մեծ պարտքեր կուտակելու: Այն ժամանակ շատ խոսվեց ՌԴ կենտրոնական բանկի սխալ դիրքորոշման մասին: Հայաստանում, անշուշտ, այս նախադեպին տեղյակ են: Ուստի բանկերին կարող է առաջարկվել ՊԿՊ-ներ գնել, սակայն ոչ թե իրենց նախընտրելի կամ սակարկությունների ծեւավորվող այլ պետությանը ծեռնտու, ինչ-որ առումով «հաստատագրված» եկամտաբերությամբ: Ցանկալի հեռանկար, սակայն շուկայական տնտեսության եւ ազատականության պայմանները պետության կողմից նման միջամտությունը կարող է միայն կարճաժամկետ հաջողության բերել, հաստատագրված հարկերի գաղափարը մասամբ դեռ ընդունելի է, բայց հաստատագրված եկամտաբերության եւ ՊԿՊ-ների ծավալների սահմանումը՝ անքննադատելի: Պետությունը մի քանի ամիս անց վերջին կկանգնի դատարկ տաշտակի առաջ, բայց այս անգամ արդեն դատարկ տաշտակում ոչ միայն կբացակայեն տեղական ու միջին բիզնեսի ներկայացուցիչները, այլեւ օտարերկրյա ներդնողներն ու բանկերը: Բանկային համակարգը եւ այնտեղ առկա կապիտալը այն նուրբ ոլորտն է, որի կայացումը Հայաստանի հանրապետության եզակի նվաճումներից է, այն վտանգելը ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական ծախողում կլինի:

digitised by A.R.A.R.@

ազգային

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ

«Հայաստան» հիմնադրամը կորցրե՞լ է առաջատարի դերը

Հայաստանում գործում են երեք խոշոր բարեգործական կազմակերպություններ՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, որը 1989-98 թթ. հանրապետությունում ներդրել է 39 մլն դոլար, Հայ օգնության միությունը, որը 1989-98 թթ.-ի ընթացքում ներդրել է 21 մլն դոլար եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որն իր ծննդից՝ 92 թ.-ից մինչեւ 98 թ. ներդրել է 56 մլն դոլար: Նշված գումարները կազմակերպությունները հայրենիքում ներդրել են տարբերյալ ծրագրեր իրագործելու միջոցով՝ սկսած երկրաշարժից ու պատերազմից տուժածներին առաջին օգնության պարագաներ՝ դեղորայք, վառելիք, հագուստ, նպաստներ հատկացնելուց, մշակութային, կրթական ծեռնարկներ հովանավորելուց մինչեւ զարգացման ծրագրեր:

Թվարկված կազմակերպություններից բացի, Հայաստանում գործում են նաեւ փոքր հնարավորություններով հազարավոր կազմակերպություններ ու հիմնադրամներ, որոնք գործունեության սահմանափակ շրջանակ ունեն: «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծման նպատակներից մեկը նաեւ փոքր ու միջին կազմակերպությունների ֆինանսական միջոցները կոորդինացնելն էր եւ ծրագրերի կրկնությունը բացառելը: Իսկ առավել մեծ պլանով՝ կայուն ֆինանսական աղբյուր ստեղծելով, Հայաստանի համար ստրատեգիական նշանակության ծրագրեր իրագործելը: Գործունեության առաջին երկու տարում հիմնադրամին հաջողվեց իրականություն դարձնել իր ծգտումը, եւ կազմակերպության գումարային ամենախոշոր ներդրումները կատարվեցին այդ տարիներին: Սակայն, նշված երեք կազմակերպությունների վերջին մեկ տարվա աշխատանքային պատկերը ֆինանսական ներդրումների նվազեցում է արձանագրում: Այսպես՝ ՀՕՄ-ը 98 թ. իրականացրած ծրագրերով ներդրել է մոտ 1 մլն դոլար, «Հայաստան» համահայկական հիմնադրամը՝ 3 մլն դոլար, ՀԲԸՄ-ինը, ընդհակառակը, ավելացել է՝ 8 մլն դոլար:

Չանդրադառնալով նշված երկու կազմակերպությունների գործունեությանը, հարկ ենք համարում առանձնակի ուշադրության արժանացնել «Հայաստան» համահայկական հիմնադրամում գումարների նվազեցմանը, որը շատ խորը բացատրություններ ունի: Առանձնացնենք դրանցից երկուսը՝ հիմնադրամն իբրեւ համակարգող կենտրոնական կառույց կորցրել է իր նշանակությունը, քանի որ հոգաբարձուների խորհրդի անդամ ՀԲԸՄ-ն, օրինակ, իբրեւ առանձին կազմակերպություն, 98 թ. շատ ավելին է ներդրել՝ 8 մլն դոլար, քան հիմնադրամը՝ 3 մլն: Եվ երկրորդը, այդ մարմինը չկարողացավ պահպանել հաղթական չեզոքության համարումը: Հիմնադրամում գումարների նվազեցման համար հիմնավոր բացատրություն է նաեւ այն, որ այդ կառույցին չհաջողվեց անփոփոխ պահել իր հիմնական խնդիրը՝ Հայաստանի համար ստրատեգիական նշանակության ծրագրեր իրագործելը հաջողությամբ էր կատարել մի որոշ ժամանակահատված: Ավտոճանապարհների շինարարություն՝ Երեւան-Մեղրի, Գորիս-Ստեփանակերտ, Հալիձոր-Տաթեւ, կամի հանգույցների, էլեկտրահաղորդակցման գծերի եւ ենթակայանների, ջրատարների կառուցում ու նորոգում, կրթօջախների, առողջապահական հիմնարկների, աղետի գոտու, սահմանամերձ բնակավայրերի վերականգնում եւ այլն:

Սակայն, կարծում ենք, «Հայաստան» հիմնադրամի խնդիրը չէր զանազան մանր ու ոչ առաջնային ծրագրերի միջեւ ֆինանսական միջոցներ տրոհելը՝ դասագրքերի մրցույթներ կազմակերպելը, երիտասարդ գիտնականներին ու շնորհաշատ երեխաներին հովանավորելը, մարզիկներին պարգեւատրելը, ազատամարտիկների երեխաներին նպաստներ բաժանելը, կոնֆերանսներ ֆինանսավորելը, մշակութային կոլեկտիվների, ուսանողների հովանավորելը, եկեղեցի վերականգնելը եւ այլն:

Նկատի ունենանք, որ թվարկածներից յուրաքանչյուրով զբաղվող տասնյակ կազմակերպություններ են գործում թե Հայաստանում, թե սփյուռքում, եւ այդ ծեռնարկները վաղ չեն իրականացնում: ՀՕՄ-ից բացի, որ 4000 որբ երեխաների խնամք է ստանձնել, այդ ծրագիրն իրականացնում են եւս մեկ տասնյակից ավելի կազմակերպություններ, որոնք ցանկանում են անվանական հիմնադրամներով հանդես գալ: Տարիներ շարունակ ՀԲԸՄ-ն ու ՀՕՄ-ը կրթական եւ մշակութային ծրագրեր են հովանավորում, նրանց կողքին՝ նաեւ ուրիշները: Ավելին, այս կազմակերպություններն իրենց զարգացման ծրագրերով նաեւ թեթեւացնում են հիմնադրամի «բեռը»: Հայ օգնության միությունը մասնակից է «Չմեռ» ծրագրի իրագործմանը, Ախուրյանի տարածքում կառուցել է երկրաշարժից ավերված Սարիար, Կրաշեն գյուղերը, Արշալույս Շիրակյան ավանը, Նոյեմբերյան ավանը, Հիվանդանոց, դպրոց, մանկապարտեզ եւ այլն: Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Գյումրիում կառուցեց մթերանոց-սառնարան, վերանորոգեց կատարողական արվեստի ակադեմիան, ստեղծեց վերականգնողական կենտրոնը, ստանձնել է ամերիկյան համալսարանի եւ մի շարք այլ կրթական ու մշակութային ծրագրերի հովանավորումը:

Հիմնադրամում սփյուռքահայության ներդրումների համար մեծ խթան կարող են լինել նրա անբասիր գործունեությունը, տրամաբանված ու նպատակային ծախսումները: Դրական ազդեցություն կունենա երկխաղաղացիության ընդունումը, որովհետեւ «կառուցիր քո բաժինը» կարգախոսը չէր կարող երկար հնություն բռնել, եթե կառուցողին թույլ չի տրվում խլել «իր բաժին» ճանապարհով: Եվ վերջինը, հիմնադրամը պարտավոր էր պահպանել ապաքաղաքականացված կառույցի վարկանիշը, որը չհաջողվեց Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականին անմիջապես հաջորդեց հիմնադրամի գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանի հրաժարականը, դրանով իսկ շեշտելով քաղաքականացված մարմին լինելու հանգամանքը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ վերջինիս հաջորդած գործադիր տնօրեն Ռաֆֆի Հովհաննիսյանի հրաժարականը նույնպես բացասաբար անդրադարձավ հիմնադրամի գործունեության վրա:

Հույս հայտնենք, որ առաջիկա աշնանը գումարվելիք հայրենիք-սփյուռք խորհրդաժողովի շրջանակներում առավել մանրազնին կքննարկվեն հիմնադրամի կառուցվածքն ու խնդիրները:

ՍԱՍՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կոնյակի քանի հայ դիցուհուն արթնացնելու փորձ

«Երեւան-բրենդի» ընկերությունը նախանձախնդիր է

«Երեւան-բրենդի» ընկերության գլխավոր տնօրեն եւ նախագահ Պիեռ Լարեյը հայաստանյան կոնյակագործության ոլորտում իրենց քաղաքականությունը բնութագրեց իբրեւ կանչ քնած անտառում: «Մենք փորձում ենք արթնացնել քնած գեղեցկուհուն: Երեւանի կոնյակի գործարանն անգամ առեւտրական ներկայացուցչություն չուներ, չկար առեւտրային բաժին, բացակայում էր PR (հանրային հարաբերություններ) հասկացությունը: Տայսօր մենք բավական դրական աշխատանքներ ենք կատարել, եւ այդ աշխատանքների կիզակետը ներկայացուցչության հիմնումն է: Շուտով՝ հուլիսի 1-ից ներկայացուցիչը կսկսի աշխատել», **«Ազգին»** ասաց Պիեռ Լարեյը: Մենք արդեն ծանուցել ենք, որ այդ ներկայացուցիչը Վահան Փափազյանն է: «Նա տարածաշրջանում կներկայացնի ոչ միայն հայկական կոնյակը, այլեւ «Պեռնո Ռիկարի» ողջ արտադրանքը»:

Պիեռ Լարեյը ազգությամբ բասկ է, որի բասկյան արյունը սկիզբ է առել Սեն Ժան դե Լյուզ անունը կրող գավառաքաղաքից: Բառացի թարգմանությամբ նշանակում է տուն մարգագետնում: Այս մարգագետնից Լարեյի ծնողները տարագրվել են Փարիզ եւ Փարիզում էլ նա ծնվել է այնտեղ սանալով կրթություն եւ մասնագիտացել գինեգործության բնագավառում: Գինեգործությունը Լարեյների ընտանեկան զբաղմունքն էր: Խորհրդանշական է, որ Պիեռ Լարեյն իր աշխատանքային ուղեգծի կիզակետում հիմնել է ինքնուրույն կանադական ընկերություն, այնքան հաջողակ ու արգասաբեր, որ «Պեռնո Ռիկարն» ի վերջո որոշել է գնել այդ ընկերությունը: Եվ այսպես, «Երեւան-բրենդի» ընկերության ներկայիս նախագահն ու տնօրենը դարձել է «Պեռնո Ռիկարի» աշխատակից: «Պեռնո Ռիկար» ընկերությունն այսօր նաեւ լիիրավ սեփականատերն է Երեւանի կոնյակի գործարանային համալիրի՝ «Ինն հրավիրեցին աշխատելու Հայաստան, ես եւ զարգացման ծրագրերի մասնագետ եմ, եւ ունեմ գինեգործության արտադրական փորձ: Բացի այդ՝ նախընտրում եմ բարդ իրավիճակներ», ամփոփեց **«Ազգի»** զրուցակիցը:

Հայաստանը օտարերկրացի ներդնողի աչքերով

Մեր առաջին հարցերից մեկը վերաբերում էր ամենակարեւորին՝ ինչպե՞ս է իրեն զգում օտարերկրյա ներդնողը Հայաստանի տնտեսահրավական դաշտում, որքանո՞վ է պաշտպանված չինովնիկների վարչարարական միջամտություններից: Պրն Լարեյին մենք հիշեցրինք նախկին վարչապետ Արմեն Դարբինյանի խոստովանությունը, որ իրենք չկարողացան ստեղծել օտարերկրյա ներդնողի համար բարենպաստ պայմաններ. «Թափառումներից հետո ներդնողները սիրտը տրած էին կամ «տանիք փնտրել, կամ հավաքել ճամպրուկները»:

«Ներդնողի համար շատ ծանր է եւ իսկապես բարդ: Ես միշտ մտածել եմ, թե ինչպես են փոքր ընկերությունները գործում Հայաստանում եւ չեմ պատկերացնում անգամ, թե ինչպես են նրանք գլուխ հանում չինովնիկների ստեղծած իրավիճակից նույնիսկ այն դեպքում, երբ ընկերություններն ուզում են հարգել պետական ու բյուրոկրատական օրենքները, որ պարտադրվում են: Բայց ընդունելով եւ հարգելով հանդերձ՝ հաճախ չես կարող գործել, որովհետեւ շատ է թանկ: Կարծում եմ, որ մեր կարգի ընկերությունները կարող են որոշակիորեն գոյատեւել, բայց փոքր ներդնողներն այս հակազդումներն ու պարտադրանքները չեմ կարծում, որ կարող են հաղթահարել: Ժամանակի ընթացքում, իհարկե, ամեն ինչ դեռ կբարելավվի, սակայն ներկայումս այս խանգարիչ հանգամանքները շատ զգալի են, եւ դրանք խոչընդոտում են զարգացման ծրագրերին», արձանագրեց Պիեռ Լարեյը:

«Երեւան-բրենդի» ընկերությունը, ի հեռուկս բյուրոկրատական պատնեշների, նորացնում է իր պարտադիր տեսականին: Ֆրանսիական տնօրենությունը մեզ հայտնեց, որ ամենաբարձր պահանջարկ ունեն «Արարատ» տեսակի կոնյակները՝ երեքասներից սկսած մինչեւ «Նաիրին»: Բարձր վարկ ունեցող տեսակավոր կոնյակները թեեւ ճանաչված են, բայց գնի պատճառով մատչելի չեն, ուստի հայկական կոնյակի նախկին տեսակին բավականաչափ կրճատվում է: Երեւանի կոնյակի գործարանային համալիրն ունի երեք մասնաճյուղ՝ Այգեվանի, Արմավիրի եւ Բուրաստանի: Մեր հարցին ի պատասխան Պիեռ Լարեյը հավաստիացրեց, որ իրենք կպահեն մասնաճյուղերը եւ փնտրում են արտադրական տրամաբանություն ու շահութաբերություն ապահովելու եղանակներ: Այս ծեռնարկությունները բարվոք վիճակում չեն: «Ես դրանք կոչում եմ արտադրության գործիքներ եւ ըստ կարիքի ու սարքավորումների մենք պետք է դրանք հատուկ մասնագիտացնենք: Այդ դուստր ծեռնարկություններից որեւէ մեկում կիրականացվի միայն թորում, իսկ մեկ այլ տեղ կպատրաստվեն միայն տակառներ», նշեց նա, ինչը վկայում է, որ այդ գործարանները ծեռք են բերելու արտադրամասերի դերակատարում:

Տարկային պարտավորությունների զիջման դիմաց 8000 տ խաղողի մթերում

Կառավարության որոշումը տպագրված պաշտոնական տեղեկագրում, հավաստում է, որ Հայաստանն ընդունել է «Պեռնո Ռիկարի» պահանջը՝ շուրջ 800 հազար դոլարով նվազեցնել «Պեռնո Ռիկարի» ֆինանսական պարտավորությունները, բայց դրա դիմաց՝ «Պեռնո Ռիկարը» պարտավորվում է հավելյալ խաղող մթերել՝ գործարար ծրագրով նախատեսված 10 հազար տոննայի փոխարեն 18 հազար տոննա: Մեր այս հարցը պարզաբանելով՝ Պիեռ Լարեյն ընդգծեց. «Քանի որ մենք աուդիտը կատարել ենք տարեմիջյան կտրվածքով, ապա որոշակի հարկային պարտավորությունների վերահաշվարկ եղավ: Բայց չեմ կարող ասել, թե դա ազդեց գործարանի ծեռքբերման գումարի վրա: Հարկերի հաշվառման երկու ճշտում եղել է: «Անիո» աուդիտորական ընկերությունն է կատարել այդ ճշտումները, եւ մենք իրոք 10 հազար տոննայի փոխարեն մթերելու ենք 18 հազար տոննա խաղող»:

«Տարիներ շարունակ կոնյակի սպառումն անկում է ապրում: Հաճախորդների շրջանակում կոնյակը երիտասարդ, մոդեռն խմիչքի վարկ չունի: Օղի, վիսկի, ռոմ՝ ահա այն խմիչքները, որ նախընտրում է երիտասարդությունը», շարունակեց Պիեռ Լարեյը՝ բացատրելով, թե ինչու Երեւանի կոնյակի գործարանում պատրաստի արտադրանքի պահեստավորված քանակի ավելցուկ կա: Հանգուցալուծումը գովազդային ագրեսիվ քաղաքականությունն է՝ քնած գեղեցկուհուն արթնացնելու կանչը: Ահա թե ինչու օգոստոսի երկրորդ 15-օրյակում՝ 16-ից իրենք հանդիսավոր կներկայացնեն նոր ապրանքների տեսականի՝ Հայաստանում եւ Ռուսաստանում: Պիեռ Լարեյը մեզ հավաստիացրեց, որ ինքը համի տեսանկյունից ֆրանսիական կոնյակից առավել նախընտրում է հայկական կոնյակ: «Տակառների փայտի համը թափանցում է խմիչքի մեջ եւ հատուկ մի որակ է հաղորդում նրան: Երբ մի փոքր հայկական կոնյակ ես խմում, անմիջապես դրանից հետո ուզում ես ջուր խմել, ինչը բնավ այդպես չէ ֆրանսիական խմիչքն օգտագործելիս: Հայկական կոնյակներն ավելի բուրմնալից են, պարֆյումերացված»: Մենք նշեցինք եւս մեկ տարբերություն Ֆրանսիայում եւ այլուր կոնյակ պատրաստում են թորած ջրի հիման վրա, իսկ մեզ մոտ ոչ: «Այդ համածայնեց Պիեռ Լարեյը եւ ավելացրեց, էական է նաեւ վանիլի համը, որ փայտից է անցնում խմիչքին»:

Պիեռ Լարեյն իրենց միանգամայն հաջողությունը համարեց հայկական կոնյակի նոր սանդղարշի պետական ամրագրումը: Ֆրանսիացիները խիստ մտահոգ են հայկական կոնյակի որակով. «Մենք ենք կառավարությանը խնդրել, որ հայկական կոնյակ կոչվող այս խմիչքն անպայմանորեն ստացվի միայն Հայաստանում, այն դեպքում, երբ ֆրանսիականը կարող է արտահանվել նաեւ տակառներով եւ ստացվել այլ տեղում»: Պիեռ Լարեյը մեզ տեղեկացրեց նաեւ, թե որոշ ժամանակ անց հայկական կոնյակը կհայտնվի Ֆրանսիայում, թեեւ զգուշացրեց, որ ֆրանսիացիները կոնյակ չեն սիրում: Նրանք նախապատվություն են տալիս պորտֆեյնին, հայտնի «Ռիկարին» եւ ապրանքանիշերին: Մի փոքր արեւը հայկական կոնյակում գուցե կփոխի նրանց:

ԳԱՐԵԳԻՆ ԴԵԼԲԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Միջազգային

ՀՐԵԱԿԱՆ ԽԱՂԵՐ-2

Անառակ օլիգարխի վերադարձը

Բերեզովսկին փորձում է վերականգնել իր կորցրած դիրքը

Բերեզովսկին սկսել է աջ ու ձախ հայտարարություններ անել: Մեկ նա մամլո ասուլիս է հրավիրում, ուր հրապարակում է Պեսդուման գրելու իր որոշումը եւ պարծենում Յումաշեւի ու Դյաչենկոյի հետ ունեցած կապերով, մեկ խցկվում Ռուսական մամուլի առաջին համաշխարհային կոնգրեսի մասնակիցների շարք՝ «համեստորեն» ինքնադատելով, թե Ռուսաստանի ներկա ղեկավարությունն «-ի վիճակի չէ ծեւակերպելու ոչ ներին, ոչ արտաքին կողմնորոշումները»:

Բերեզովսկուն միշտ ինչ-որ բան դուր չի գալիս կամ գործադիր իշխանությունը, կամ օրենսդիրը: Թեեւ նրան հասկանալ կարելի է նրան, ավելի ճիշտ, դուր չի գալիս իշխանության մեջ իր զբաղեցրած դիրքը: Վերջին կառավարական ճգնաժամը խիստ վատթարացրել է ԲԱԲ-ի վիճակը: Գլխավոր դատախազի արտոնած ծերբակալությունն այդպես էլ տեղի չունեցավ, սակայն Բերեզովսկու վարկանիշին ուժեղ հարված հասցվեց:

Այսօր Բերեզովսկին չի հոգնում կրկնելուց, որ նրա դեմ հարուցված քրեական գործը փակվել է մեղադրանքի անհեռանկարության պատճառով: Իրականում Բորիս Աբրամովիչը ստիպված է մշտապես այցելել իր գործի քննիչին քաղաքից բացակայելու թույլտվություն ստանալու համար: Մինչ այդ էլ նա ստիպված էր խնդրել արտասահմանյան անձնագիր փոխելու թույլտվությունը: Այնպես որ ԱՊՀ նախկին գործադիր քարտուղարի անօրինական գործակալությամբ զբաղվելու փաստով հարուցված քրեական գործն ընթանում է իր հերթով, եւ կարծես ոչ ոք չի ցանկանում Բերեզովսկուն ժամանակից շուտ ազատ թողնել...

Սկուրատովն ինքն էլ չկասկածելով, անգնահատելի օգնություն ցույց տվեց Ելցինի «ընտանիքին», որը հաճախ էր «նեղվում» տգի պես կոչուն օլիգարխի չափից դուրս խնամակալությունից: Քրեական գործի հարուցումից հետո իրավիճակն արմատապես փոխվեց: Եթե նախկինում Բերեզովսկին տառապիորեն թելադրում էր իր պահանջները Տատյանա Դյաչենկոյին, չխորշելով անգամ ակնհայտ շանտաժից, արդա այժմ նա խնդրողի դերում է միշտ երկյուղելով «Սերոֆլոտի» գործով հետաքննության թեժացումից:

Կառավարության ներկա կազմը կակրանքն է: Սվերային հաղթականություն Չուբայսի վերադարձը ուղեկցվեց նրա մի պահանջով բացառել Բերեզովսկու ազդեցությունը որոշումների ընդունման վրա: Այս գործոնների գոյությունն էլ հենց պայմանավորեց ԲԱԲ-ի բախտը Սկուրատովին հանձնելու փորձը:

Գլխավոր դատախազի եւ «ընտանիքի» միջեւ առեւտուրը տեղի ունեցավ Սկուրատովի առաջին ձախորդված պատշտոնանկության նախօրեին: Սկուրատովին ասացին ինչ ուզում ես արա, միայն ձեռ մի տուր Դյաչենկոյին եւ Աբրամովիչին: Սկուրատովն այդպես էլ արեց:

Սկնհայտ է մի բան. Բերեզովսկին կորցրել է իր նախկին ուժը, սակայն ինչ-որ բան դեռ մնացել է: Դուստ նրան աջակիցների թիվը բավականին մեծ է, քանի որ «կանաչ» փաստարկը Ռուսաստանի խորհրդարանում որոշումներ լուծող ամենահզոր ուժն է: Սակայն ցավն այն է, որ այդ «փաստարկներն» այժմ Բերեզովսկու գրպանի կողքով են անցնում: Լավ իմանալով ՁԼՍ-ների ուժը, Բերեզովսկին սկսել է աննախադեպ ակտիվություն ցուցաբերել այս ոլորտում: Խոչընդոտներին ուշադրություն չդարձնելով նա փորձում է ստեղծել Ռուսաստանում ամենահզոր տեղեկատվական կայուրությունը: Դումայի եւ նախագահական ընտրությունների նախաշեմին մեդիայի «արքաները» հատուկ փառքի են արժանանալու: Իսկ հզոր հեռուստատեսությամբ եւ տպագիր մամուլով ԲԱԲ-ը հաստատ առանց «փաստարկների» չի մնա: Ուստի հնարավոր կլինի վերականգնել «ընտանիքում» թուլացած դիրքը. կարելի է նաեւ սեփական թեկնածուին առաջարկել նախագահի պատշտոնում: Օրինակ, Լեբեդը երկար ժամանակ նահանգապետ է...

Ըստ «Մոսկովսկի կոմսոմոլեցի» պատրաստեց
ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԸ

ԲԱԲ-ի «ընտանեկան» վարկանիշի անկման վկայությունն է: Նախարարների խորհրդում հիմնական ֆինանսական եւ արդյունաբերական բարձունքները Ռոման Աբրամովիչի մարդիկ են գրավել, մյուս տեղերում՝ Չուբայսի: Բերեզովսկին այսօր ոչ թե շաս վերահսկում է ՆԳՆ-ը, սակայն նախարար Ռուշայլոն ակնհայտորեն չի պատրաստվում կառչել խեղդվող օլիգարխից:

Բերեզովսկու թուլացման պատճառներից մեկն էլ «ընտանիքի» օրօրի ուժ հավաքող անդամներից մեկի՝ Անատոլի Չուբայսի անսքող հակադրությունն է: Սվերային հաղթականությունն Չուբայսի վերադարձը ուղեկցվեց նրա մի պահանջով բացառել Բերեզովսկու ազդեցությունը որոշումների ընդունման վրա: Այս գործոնների գոյությունն էլ հենց պայմանավորեց ԲԱԲ-ի բախտը Սկուրատովին հանձնելու փորձը:

Գլխավոր դատախազի եւ «ընտանիքի» միջեւ առեւտուրը տեղի ունեցավ Սկուրատովի առաջին ձախորդված պատշտոնանկության նախօրեին: Սկուրատովին ասացին՝ ինչ ուզում ես արա, միայն ձեռ մի տուր Դյաչենկոյին եւ Աբրամովիչին: Սկուրատովն այդպես էլ արեց:

Սկնհայտ է մի բան. Բերեզովսկին կորցրել է իր նախկին ուժը, սակայն ինչ-որ բան դեռ մնացել է: Դուստ նրան աջակիցների թիվը բավականին մեծ է, քանի որ «կանաչ» փաստարկը Ռուսաստանի խորհրդարանում որոշումներ լուծող ամենահզոր ուժն է: Սակայն ցավն այն է, որ այդ «փաստարկներն» այժմ Բերեզովսկու գրպանի կողքով են անցնում: Լավ իմանալով ՁԼՍ-ների ուժը, Բերեզովսկին սկսել է աննախադեպ ակտիվություն ցուցաբերել այս ոլորտում: Խոչընդոտներին ուշադրություն չդարձնելով նա փորձում է ստեղծել Ռուսաստանում ամենահզոր տեղեկատվական կայուրությունը: Դումայի եւ նախագահական ընտրությունների նախաշեմին մեդիայի «արքաները» հատուկ փառքի են արժանանալու: Իսկ հզոր հեռուստատեսությամբ եւ տպագիր մամուլով ԲԱԲ-ը հաստատ առանց «փաստարկների» չի մնա: Ուստի հնարավոր կլինի վերականգնել «ընտանիքում» թուլացած դիրքը. կարելի է նաեւ սեփական թեկնածուին առաջարկել նախագահի պատշտոնում: Օրինակ, Լեբեդը երկար ժամանակ նահանգապետ է...

Ըստ «Մոսկովսկի կոմսոմոլեցի» պատրաստեց
ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԸ

«Երկարականջների» սկանդալ Թուրքիայում

Թուրքիայում «երկարականջ» են անվանում գաղտնի ունկնդրությամբ զբաղվող ոստիկաններին: Վերջերս նրանց մասին շաս է խոսվում ոստիկանության 15 բարձրաստիճան պատասխանատուների հեռացման պատճառով:

Երբ Թուրքիայի անվտանգության ծառայությունն անօրինական կարգով գաղտնի ունկնդրության սարքեր է տեղադրում որոշ քաղաքացիների հեռախոսներում, այլեւս ոչ ոքի չի զարմացնում: Բայց երբ հեռախոսազրույցների գաղտնի ունկնդրումը չտեսնված լայն չափերի է հասնում, արդեն խայտառակություն է համարվում նույնիսկ Թուրքիայում: Մինչդեռ վերջերս բացահայտվեց, որ մի քանի լրագրողներից բացի, ոստիկանությունն ունկնդրում էր նաեւ դատավորների, քաղաքական գործիչների, զինվորական օտաքի, նախագահական նստավայրի եւ նույնիսկ վարչապետի բնակարանի հեռախոսազրույցները:

Ոստիկանության պատասխանատուն այն բացատրությունը, թե գաղտնի ունկնդրության սարքերը տեղադրվել են հակամաֆիական պայքարի նպատակով, մեղմ ասած, անհամոզիչ է: Ֆրանսիական «Պուենե» հանդեսի Ստամբուլի թղթակից Էրիկ Բեգալան այն ենթադրությունն է անում, թե աղմկալի բացահայտումները ոստիկանության երկու ընդդիմադիր խմբերի պայքարի հետեւանքն են: Ըստ որում, խմբերից մեկը սերտ հարաբերություններ ունի մոլեռանդ կրոնավորների, մյուսը առավելապես աշխարհիկ գործիչների հետ: Առայժմ հաջողությունն ուղեկցում է առաջին խմբի ոստիկաններին:

Կարգուկանոնի պահապանների այս քաղաքականացումը եւ դրանից բխող միջոստիկանական երկպառակությունը կասեցնելու նպատակով կառավարությունը նախապատրաստում է բարեփոխման ծրագիր, որը կսահմանափակեր կլանային նվիրվածության ներկա համակարգի գործառույթի ոլորտը: Բարեփոխումը համարվում է հրատապ անհրաժեշտություն, քանի որ «երկարականջների» ծառայություններից օգտվող քաղաքական խմբերի գործունեությունը կարող է առավել վտանգավոր դառնալ:

Պ. Ք.

Ծննդաբերությունից առաջ չարժե սուրճ խմել

Սուրճը վնասակար է նորածնի չծնված ուղեղի համար: Դա հաստատում են Ֆրանսիայի բժշկական հետազոտությունների փորձառական ինստիտուտի մասնագետների վերջին գիտափորձերը, որոնց արդյունքների մասին տեղեկացնում է «Պուենե» հանդեսը: Հետազոտությունները վկայում են, որ մանավանդ հղիության վերջին շրջանում սուրճ խմող ապագա մայրը կարող է ընկնավորությամբ տառապող մանկիկ ծնել: Յեհեզկել Բեն Արիի գլխավորած բժիշկների խումբը հիմք է ընդունել երկու դրույթ: Նախ, հղի կնոջ խմած սուրճի կոֆեինը թափանցում է պտղի ուղեղի մեջ: Արդա, վերջինիս թթվածնային մատակարարման ժամանակավոր վատացումը բարդացնում է ծննդաբերության ընթացքը:

Լաբորատոր փորձերի ժամանակ ուղեղի որոշ նեյրոններ (բջիջներ) դրվել են մի քանի գավաթ սուրճին համապատասխանող կոֆեինի միջավայրում, առանց թթվածնի պահելով 3-4 րոպե: Այդ պայմաններում բջիջներն ի հայտ են բերել այսպես կոչված էլեկտրական պարոխիզմի նշաններ, իսկ դրան հաջորդած «լիցքաթափումը» հարուցել է ընկնավորության նոպա: Մինչդեռ առանձին վերցրած կոֆեինի մեծ չափաբաժինը կամ կարճատեւ թթվածնային քաղցը նման հետեւանք չեն առաջացնում:

Պ. Ք.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Իրանի նախագահը դեմ է Կասպիականի ռազմականացմանը

ԲԱՔՈՒ, 28 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կասպիականի ռազմականացումից հրաժարվելու Իրանի նախագահ Մոհամադ Խաթամիի կոչը անմիջականորեն կապված է իր տարածքում ՆԱՏՕ-ի ռազմահանգրվաններ տեղաբաշխելու Ադրբեջանի մտադրության հետ: Այս կարծիքին են Ադրբեջանի արտգործնախարարությունում:

Իրանի ղեկավարի այդ դիրքորոշումը իր արտացոլումը գտավ նախագահ Խաթամիի ուղերձում, որը հրապարակվեց Թեհրանում ավարտված «Կասպից ծով. հնարավորություններն ու սահմանափակումները» միջազգային խորհրդաժողովում, որի աշխատանքին մասնակցում էին 25 երկրների, այդ թվում ԱՄՆ-ի պատվիրակություններ, Փարիզ նյուսի թղթակցին հաղորդել են Ադրբեջանի արտգործնախարարությունում:

Կասպիականի յուրացման եւ անվտանգության հարցերին նվիրված նախագահ Մոհամադ Խաթամիի ուղերձը շաբաթ օրը Բաքվում տարածել է Իրանի դեսպանությունը:

Սպասելիներին հակառակ, նախագահ Խաթամին այդ ուղերձում ավելի մեղմ է շարադրել Իրանի դիրքորոշումը Կասպիականի էներգետիկ ու կենսաբանական պաշարների օգտագործման եւ նրա բնապահպանական պաշտպանության հարցերում:

Կասպիականում ռազմական դիմակայության վտանգավորության մասին Իրանի նախագահի թեզիսը հիմնվում է սթափ դատողության վրա, ըստ Ադրբեջանի արտգործնախարարության, եթե նկատի առնվի ոչ միայն ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի ռազմական ներկայությունն այստեղ:

Սակայն այդ ուղերձում նախագահ Խաթամին մի բառ անգամ չի ասել Կասպիականում արդեն գոյություն ունեցող եւ մերձկասպյան մյուս պետությունների համար սպառնալիք ներկայացնող Ռուսաստանի ռազմահանգրվանների մասին, նշել են Ադրբեջանի արտգործնախարարությունում:

Երեք ձեռնարկուն հանգստի ու զվարճանքների խոշոր համալիր է կառուցելու Թբիլիսիում

ԹԲԻԼԻՍԻ, 28 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՕՐԱՅՍ ՆՅՈՒՍ: Երեք խոշոր ձեռնարկու Յահենգկել էլանը պատրաստ է 100 մլն դոլար ներդնել Թբիլիսիի ծիրարավարանի մոտակայքում նոր բաղաքաս կառուցելու համար: Ինչպես Վրաստանի զբոսաշրջության խոշոր ֆիրմաների եւ հյուրանոցների ղեկավարների հետ կայացած հանդիպման ժամանակ հաղորդեց Վրաստանի զբոսաշրջության եւ առողջավայրերի պետդեպարտամենտի նախագահ Վաժա Շուբլաձեն, Յահենգկել էլանի նախագծով նախատեսվում է կառուցել հանգստի ու զվարճանքների մի ամբողջ համալիր, որի մեջ ծիրարավարանից բացի կմտնեն առանձնատներ, իջեւանատներ մոթենատներով զբոսաշրջիկների համար, մեծ լողավազան եւ այլ օբյեկտներ:

Ներկայումս իսրայելցի ձեռնարկուն այդ նյութի շուրջ եռանդուն բանակցություններ է վարում Թբիլիսիի ծիրարավարանին հարող տարածքի տնօրեն, «Սամգորի» ֆիրմայի նախագահ Վլադիմիր Ղվարացխելիայի հետ:

ԲԱԿԱՌՆԵՐ

Հարավսլավիան մտադիր չէ վճարել իր արտաքին պարտքերը

ԲՈՆՆ, 28 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հարավսլավիան մտադիր չէ վճարել իր արտաքին պարտքերը, որոնք գնահատվում են 12 մլրդ դոլար: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այս մասին գերմանական «Շպիգել» շաբաթաթերթին տված հարցազրույցում հայտարարել է Սերբիայի վարչապետ Վոյսլավ Շեշելն, ընդգծելով, որ պարտքի գումարը կհավասարվի որոշես ՆԱՏՕ-ի ռազմական գործողության հետեւանքով Հարավսլավիային հասցված վնասի փոխհատուցում, որի նպատակն էր, նրա կարծիքով, «Սերբիան ոչնչացնելու» ԱՄՆ-ի ծգտումը: Գնահատելով պատերազմի ավարտվելուց հետո Հարավսլավիայի ներքին իրավիճակի զարգացման հեռանկարները, սերբ ծայրահեղ ազգայնականների ղեկավարը կողմ է արտահայտվել երկրում վաղաժամկետ ընտրությունների անցկացմանը, սակայն նա դեմ է նախագահ Սլոբոդան Միլոշեւիչի անհապաղ պատասխանատվությանը: Շեշելի կարծիքով, դա կարող է հանգեցնել քաոսի եւ վտանգավոր աղակայունացման:

Կոսովոյի կառավարիչ կնշանակվի այս շաբաթ

ԼՈՆԴՈՆ, 28 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այս շաբաթ կնշանակվի Կոսովոյի վարչակազմի ղեկավար, այս պատասխանի համար կառաջադրվի եվրոպայի երկրներից մեկի հայտնի քաղաքական գործիչ: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, այս մասին բրիտանական «Ֆայնենշլ թայմս» թերթում այսօր հրապարակված հարցազրույցում հայտնել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը: Կոսովոյի կառավարչի պատասխանի համար վերջնական ընտրություն դեռ չի արվել, քննարկվում են եվրոպական տասը երկրներից թեկնածությունները, նշել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը: Կոֆի Անանի ասելով, այն կլինի քաղաքական առաջատար գործիչ, որը կազմակերպչական աշխատանքի եւ բանակցությունների փորձ ունի: Սակայն վերջին տեղեկությունների համաձայն, առավել հավանական թեկնածուներն են՝ Լիբերալ դեմոկրատների կուսակցության պատասխանատու, բրիտանացի Ֆեդի Էդուարդը, եվրահանձնաժողովի անդամ, իտալուհի Էմմա Բոնինոն եւ Ֆրանսիայի առողջապահության հարցերի պետական քարտուղար Բեռնար Քուշները:

ՀԱՍԱՐՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պակիստանը համալրում է իր օդուժը

ԴԵԼԻ, 28 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վարչապետ Նավազ Շարիֆի Չինաստան կատարած այցի գլխավոր նպատակներից մեկն է երկու երկրների միջեւ ռազմատեխնիկական համագործակցության ընդլայնումը, այսօր հաղորդում են Հնդկաստանի զանգվածային լրատվամիջոցները:

Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այն չորս պատասխանատու փաստաթղթերից մեկը, որոնք Շարիֆը կստորագրի Պեկինում, վերաբերում է F-7 ժամանակակից կործանիչի համատեղ ստեղծմանը, որը միաձիգ չի նական մարտական ինքնաթիռի վերափոխակն է: Նրա սերիական արտադրությունը ծրագրվում է սկսել 2005 թվականին: Ենթադրվում է այդ ինքնաթիռներով հանդերձել Պակիստանի եւ Չինաստանի ռազմաօդային ուժերը, ինչպես նաեւ F-7-ը զարգացող պետությունների շուկաներ հանել:

Այս շաբաթ Պակիստան կաբաթվեն Ֆրանսիայից նրա գնած 40 «Միրաժ» կործանիչներից առաջին ուրը:

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

Հայաստանին այսպիսի երաժշտություն է պետք

Երեւույթներ կան, որոնք ժամանակից ու տարածությունից վեր խոյացած լինելով ու սավառնելով ոգեղեն մթնոլորտում, միաժամանակ առօրյայի մեջ դահիւն են իրենց կենսականությունը:

Հայոց գոյակեցության մեջ այդպիսի երեւույթներից է Արամ Խաչատրյան անունը: Որքան հավերժական է նրա արարած երաժշտությունը, նույնքան եւ նրա անունը, գործը, հուշը՝ միաձուլված յուր երաժշտությանը, մշտական կենսական անհրաժեշտություն է:

Այս տարի, հունիս 6-ին թեւակոխեց իր հարատեւության 97-րդ տարեմուտը: Եվ որքան էլ նրա գոյակերպը հայ երաժշտամետ հասարակայնության հաճախանի բոլորովին նոր, ոչ դատակնացված մեկնաբանություններ ստարշ տակ մակերես է բարձրանում տաղանդորեն զարմանացունց տեխնիկական կատարելությունը:

Համերգաշարի երկու համերգն իրականացվեցին Կումայրիում (3 հունիսի) եւ Արցախում (7 հունիսի), մյուս երեք հնչեցին Երեւանում, Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում:

Առաջին համերգը (մայիսի 29-ին) գերազանցապես բաղկացած էր Շոպենի երկերից, որոնց մեկնաբանությունը զարմացրեց իր նորարարությամբ ու իմաստավորմամբ: Գուցե ոմանց համար տարօրինակ՝ քանի որ դուրս էր ավանդական ոճից, բայց, կարծում եմ, անխոցելի էր հույզերի նավորի, չընդգծել ժամանակակից ոլոսահայ բանաստեղծ Զահրատի բացառիկ հետաքրքրություն ներկայացնող «Քարի երկիր» երգաշարի իմաստասիրական-հոգեբանական սեղմ ու խորունկ, ինքնահատուկ իմաստ ու երանգ ունեցող 10 երգերի երաժշտավորումն ու դրանց սմանչելի մեկնաբանությունը Ծովինարի կողմից:

Ազգային բազմաձայնության բարձ, նրբահյուս հարստությունների դրսեւորումներ էին 4 խմբերգերը, որոնք հնչեցին Կոմիտասի անվան կոնսերվատորիայի երգչախմբի կատարմամբ, նրա գեղարվեստական ղեկավար Վ. Միրզոյանի ընորհիվ:

Երրորդ համերգը (6-ը հունիսի), որ



մար մշտնջենական է, միեւնույն է, տարեդարձների նշումը մնում է նրա նկատմամբ եղած խնկարկության յուրակերպ անհրաժեշտություն:

Այս առիթով էլ Նյու Յորքից Երեւան էր ժամանել Արամ Խաչատրյանի ողջ դաշնամուրային ստեղծագործության լավագույն մեկնաբան դաշնակահար, երաժշտաբան, երաժշտական հասարակական գործիչ Շահան Արծրունին:

Արծրունին ոչ միայն Խաչատրյանի երկերի բացառիկ մեկնաբաններից է, այլեւ յուրահատուկ հավատամք ունի մեծագույն արվեստագետի հանդեպ: Այն է՝ ստեղծագործությունների խորքից դուրս կորզել ողջ ազգային, դատական, բնափիլիսոփայական, բարոյական, ժամանակային էությունն ու իմաստը, հաղորդելով դրանց մի բացառիկորեն նոր, խոր, հուզաբաբավ հնչունություն:

Նման մոտեցումն առհասարակ դրսեւորվում է Շահանի կատարողական արվեստի մեջ, ուր առկա է ընդլայն հայացքը՝ Բախ, Բեթհովեն, Սոցարս, Շոպեն, Շուման, Գվորժակ, Գերշվինից մինչեւ ողջ համահայկական դաշնամուրային գրականությունը:

Ընդգծեմ, թե կատարման տեխնիկական հնարավորությունների տիրապետումը բոլոր ականավոր երաժիշտների համար անհրաժեշտ բաղկացուցիչ է հնչող երկի մեկնաբանության համար, եւ մեկնաբանության խորքում կատարողական այդ հատկանիշը սողոմում, մնում է միայն իբրեւ ենթակայական մասնիկ: Սակայն, Շահան

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

«Ոգեւորված եմ ձեր հաջողություններով»

Շաբաթ օրը՝ հունիսի 26-ին, տոնական մթնոլորտ էր տիրում Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում: Միջազգային խոշոր մրցումներում մյուսի ընկած Հայաստանի մարզիկներին այստեղ պարգեւներ հանձնվեցին: Արդեն երկրորդ տարին է, ինչ մեր լավագույնները կիսամյակը մեկ պարգեւատրվում են: Հաճելի ավանդույթի սկիզբը դրել է Քոչարյան վարչապետը, շարունակում է Քոչարյան նախագահը: Այս անգամ էլ Ռոբերտ Քոչարյանը մրցանակներ, պարգեւավճարներ հանձնեց ավելի քան երեք տասնյակ մարզիկների, մարզիչների, մարզական գործի կազմակերպիչների:

Ամենախոշոր պարգեւավճարն ստացավ ծանրամարտի Եվրոպայի բացարձակ չեմպիոն Ասոն Դանիելյանը: Մարզասերներին հիշեցնենք, որ Իսպանիայի Լա Կորունյա քաղաքում անցկացված աշխարհամասի առաջնությունում Ասոնը գերծանր քաշային ներների պայքարում երեք ոսկե մեդալ նվաճեց: Պարգեւատրվեց նաեւ դյուցազնի հայրն ու մարզիչը՝ Ռոման Դանիելյանը: Դրամական պարգեւներով նշվեցին եվրոպական ստուգաստեսում՝ այլի ընկած երկու ծանրորդներ՝ Խաչատուր Քյափանակցյանը եւ Հակոբ Փիլոսյանը: Նրանցից առաջինը հաղթել է պոկում վարժությունում եւ ոսկե մեդալին աշխարհի ռեկորդ ավելացրել, երկրորդը արծաթե մեդալակիր է դարձել:

Վերջին տարիներին խոշոր հաջողությունների են հասել հանրապետության սամբիստները: Այս տարի նրանք պարգապես փայլեցին տարբեր որակի համարյա 20 մեդալ բերելով Եվրոպայի առաջնություններից: Ուրախալի է, որ մրցանակներ են շահում մինչ այժմ մարզածեւի կենտրոն չհամարվող մեր մարզերում: Նշենք, որ պարգեւատրվածների թվում էր նաեւ առաջին անգամ աշխարհամասի առաջնությունում բրոնզե մեդալ ստացած արցախցի սամբիստ, պատանի Վագիֆ Մինասյանը:

Պարգեւներ ստացան նաեւ թիավարության աշխարհի գավաթի ու թեթեւ ատլետիկայի Եվրոպայի գավաթի խաղարկություններում մրցանակակիրներ դարձած մեր մարզիկները: Անմասն չմնացին մարզաշխարհի մյուս ներկայացուցիչները: Պարգեւատրվածների թվում են սպորտվարչության պատասխանատուներ Բագրատ Բուռնազյանը, Վանիկ Փիլոյանը, ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ, հավաքականի գլխավոր մարզիչ Օգսեն Սիրոյանը, մարզիչ Վահան Բիչախչյանը, սամբոյի հավաքականի մարզիչ Ռուբեն Խնկոյանը: ՀՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործչի կոչմանն արժանացան սամբոյի եւ ձյուդոյի մարզադպրոցի տնօրեն Լեւոն Հայրապետյանը, օլիմպիական հերթափոխի հանրապետական մարզադպրոցի տնօրեն, ԱԻԲԱ-ի բարձրագույն կարգի մրցավար Դերենիկ Գաբրիելյանը, ըմբշամարտի երախտավոր, ճանաչված մարզիչ Յուրի Բաբայանը, որի 70-ամյակն այդ օրը լրացավ:

Դիմելով պարգեւատրվածներին Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ հայկական սպորտը վերելք է ապրում, տարեցտարի մեր մարզիկներն ավելի ու ավելի մեծաթիվ հաջողությունների են հասնում: Հանրապետության նախագահը հատկապես կարեւորեց վերջին հաջողությունները, քանի որ դրանք ծնող են բերված նախաօլիմպիական տարում: Հայաստանի ներկայացուցիչների արդյունքները հույս են ներշնչում, որ Սիդնեյի օլիմպիական խաղերում մի քանի մեդալ կունենանք: Ռ. Քոչարյանն ասաց, որ իսկական հպարտություն է, երբ տեսնում ես հաղթանակի առթիվ Հայաստանի դրոշի բարձրանալը: Դա ուրախություն ու հպարտություն է պարգեւում ոչ միայն մարզիկներին, մարզիչներին, մարզաշխարհին, այլեւ ողջ ժողովրդին: «Ես ինքս ոգեւորված եմ ձեր հաջողություններով», ավելացրեց նախագահը: Շնորհավորելով օրվա հերոսներին՝ պրն Քոչարյանը շնորհակալություն հայտնեց հաղթանակների համար եւ միաժամանակ մարտական ու մարզական ոգի, նորանոր հաջողություններ ցանկացավ: Հանրապետության նախագահը մարզաշխարհի մարդկանց հավատիացրեց, որ ձեւավորված ավանդույթը կշարունակվի միջազգային խոշոր մրցաշարերներում ձեռք բերված հաջողությունները կնշվեն: Մարզիկները, իրենց հերթին, Ռ. Քոչարյանին նվիրեցին լեռնադահուկորդի մարզահանդերձանք: Պարգեւատրվածներին ողջունեցին նաեւ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար Ռոլանդ Շառոյանը, փոխնախարար Իշխան Զաքարյանը, սպորտվարչության պետ Արմեն Գրիգորյանը:

Պարգեւատրման հանդիսավոր արարողությունից հետո հանրապետության նախագահի մասնակցությամբ անցկացվեցին բասկետբոլի եւ սեղանի թենիսի մրցամարտեր:

Ռ. Ա.

ՖՈՒՏԲՈԼ

«Արարատը» հաղթահարեց առաջին արգելքը

Ինտերսոտոյի գավաթի խաղարկությունում

«Արարատ» (Հայաստան)–«Բակեու» (Ռումինիա)՝ 1–0:

Երեւան, «Հրազդան» մարզադաշտ, 26 հունիսի: 2 հազար հանդիսական:

«Արարատ»՝ Աբրահամյան, Բարսեղյան, Խաչատրյան, Առաքելյան, Բիլիբիո, Ղարիբյան, Նավարո, Անտոնյան (Թամոյան, 86), Շաբաթ (Թամրազյան, 78), Հովակիմյան, Ամնիսյան (Մեսրոպյան, 80):

«Բակեու»՝ Բոգդան, Չորանու (Ջիրեադե, 28), Մունտյանու, Պոպովիչ, Պեսկու (Ղլատի, 71), Ակսինտե (Հոնդրաչու, 69), Ռոտարիու, Բայկու, Պավել, Կոֆին, Բոյֆե:

Մրցավարներ՝ Ֆիլիպ Կալչ, Ավիլիո Նունյես, Կոին Լագրանժ (բոլորը՝ Ֆրանսիա):

Գոլը խփեց Հովակիմյանը (78): Զգուշացվեցին Խաչատրյանը, Առաքելյանը, Բիլիբիոն, Չորանուն, Բոյֆեն, Կոֆինը, Հոնդրաչուն:

Այս թիմերի առաջին հանդիպման ժամանակ «Արարատը» հյուրընկալվելիս 1–0 հաշվով հաղթել էր մրցակցին, եւ այս խաղում, իհարկե, ռումինացիները ոչնչի է ձգտին ակտիվ գործողությունների: Նրանք աշխատեցին հասնել հաջողության, բայց նրանց փորձերը դեմ առան մեր ֆուտբոլիստների վստահ հակազդեցությանը:

Ընդհանուր առմամբ հանդիպումն ընթացավ «Արարատի» խաղային առավելությամբ: Երեւանցի ֆուտբոլիստներն ավելի ակտիվ էին, ավելի շատ էին տիրում գնդակին: Սակայն եւ դաշտի տերերի, եւ հյուրերի գործողությունները դժվարանում էին տեղացող անձրեւի եւ բաց խոտածածկի պատճառով: Թիմերը շատ քիչ գոլային հնարավորություններ ստեղծեցին, եւ ընդամենը մեկ անգամ գրանցվեց դարպասի գրավում: Դա տեղի ունեցավ երկրորդ խաղակեսի միջնամասում: «Արարատի» հերթական գրոհի ժամանակ գնդակն անցավ Հովակիմ Հովակիմյանին, որը խստուսիկ հնարքներով անցավ ռումինացիների 2–3 պաշտպաններից եւ 17–18 մետրից շեշտակի հարվածով գոլ խփեց: Հյուրերը գոլ խփելու իրական հնարավորություն ունեցան խաղավարից մի փոքր առաջ, սակայն հիանալի խաղացին մեր դարպասապահ Հարություն Աբրահամյանն ու պաշտպանները:

Հանդիպումից հետո կայացած մամլո ասուլիսում «Արարատի» գլխավոր մարզիչ Արկադի Անդրեասյանն ասաց, որ թիմը տրամադրվել էր համառ պայքարի, եւ սպասելիքներն արդարացան: Գոհունակություն հայտնելով խաղի արդյունքի առնչությամբ՝ նա ավելացրեց, որ չի ուզում առանձնացնել ֆուտբոլիստներից որեւէ մեկին, բոլորն էլ իրենց լավագույն կողմերով դրսեւորեցին:

«Արարատի» խաղի մասին դրականորեն արտահայտվեցին «Բակեու» ակումբի նախագահ Հայկ Գեւորգյանը եւ թիմի խորհրդատու Ֆլորին Հալաջյանը: Միաժամանակ նրանք մեր ֆուտբոլիստներին հաջողություն մաղթեցին հետագա պայքարում:

Ավելացնենք, որ Ինտերսոտոյի հերթական փուլի խաղերը կանցկացվեն հուլիսի 3–4-ին եւ 10–11-ին: «Արարատի» մրցակիցը բելգիական «Սենթ Տրյուդեն» թիմն է: Առաջին խաղերը կանցկացվեն հուլիսի 3-ին, «Հրազդան» մարզադաշտում, իսկ մեկ շաբաթ հետո պատասխան հանդիպումը տեղի կունենա Բելգիայում:

Սիա թե ինչպես են ավարտվել Ինտերսոտոյի խաղարկության առաջին շրջանի բոլոր հանդիպումները: Փակագծերում առաջին խաղերի արդյունքներն են: Ընդգծված են հաջորդ փուլ մտած թիմերը:

Արարատ (Հայաստան)–Բակեու (Ռումինիա)՝		1–0 (1–0)
Սենթ Տրյուդեն (Բելգիա)–Սպարտակ (Բուլղարիա)՝		6–0 (2–1)
Վենստիլս (Լատվիա)–Վոլերենգեն (Նորվեգիա)՝		2–0 (0–1)
Տիլիգուլ (Մոլդովա)–**Պոլոնիա (Լեհաստան)՝**		0–0 (0–4)
Էկրանաս (Լիտվա)–**Շախտյոր (Ռումինիա)՝**		0–1 (0–1)
Գոմել (Բելառուս)–Գրադեց Կրալովե (Չեխիա)՝		2–0 (0–1)
Նյուրի Թաուն (Հս. Իռլանդ.)–Խրվաթ. Դրագովլյաց (Խորվաթիա)՝		2–0 (0–1)
Դարաբաղ (Ադրբեջան)–Մաֆաբի (Հ., Իսրայել)՝		0–1 (2–1)
Կոլխեթի-1913 (Վրաստան)–**Թեմենտարնիցա (Մակեդոնիա)՝**		0–4 (2–4)
Բազել (Շվեյցարիա)–Կորոտան (Սլովենիա)՝		6–0 (0–0)
Հալմստադ (Շվեդիա)–**Ռուդար (Սլովենիա)՝**		2–2 (0–0)
Դուկլա (Սլովակիա)–**Պորեդա (Մակեդոնիա)՝**	11 մ.-ով՝ 3–4	3–1 (1–3)
Ժիլինա (Սլովակիա)–Հերֆոլգե (Նորվեգիա)՝		2–0 (2–0)
Վարտեխ (Խորվաթիա)–Լոկոմոտիվ-96 (Բելառուս)՝		2–2 (2–1)
Վաչաչ (Հունգարիա)–ՌՍ Լյուքսեմբուրգ (Լյուքսեմբուրգ)՝		4–0 (3–1)
Քսամախ (Շվեյցարիա)–Շելբուռն (Իռլանդիա)՝		2–0 (0–0)
Գի Գոտու (Ֆարեր. կղզ.)–**Եդինասվո (Բոսնիա)՝**		1–3 (0–3)
Ֆլորիանա (Մալթա)–Աբերիստվիթ (Ուելս)՝		2–1 (2–2)
Տեուտա (Ալբանիա)–**Ակրանես (Իսլանդիա)՝**		2–1 (1–5)
Տրանս Նարվա (Էստոնիա)–**Ցոկերիտ (Ֆինլանդիա)՝**		1–4 (0–3)

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված մրցանակային խաչբառի դատախազները

Ուղղահայաց

1. Կաա: 2. Սմերալդինա: 3. Իդո: 4. Վերներ: 6. Կարաստ: 8. Մաակ: 10. Սինի: 11. Հալվա: 12. Կորրա: 13. «Տոսկա»: 14. Պիոիչ: 19. Գուլստանդ: 20. Կաստաղարար: 22. Կաղուտան: 23. Բախնքակ: 24. Ցուցմունք: 26. Ալբանիա: 27. Գրանդ: 29. Եղնիկ: 30. Կին: 31. Պաս: 35. Այվազովսկի: 39. Իգրեկ: 41. Տրիաս: 42. Ծորակ: 43. Կերոն: 45. Նեյլոն: 47. Որոտան: 48. Ելակ: 49. Վարկ: 54. Ինն: 55. Սմող:

Հորիզոնական

5. Արամազդ: 7. Ֆերմա: 9. Ոսան: 12. Կարաս: 15. Պատնեշ: 16. Նկարիչ: 17. Կապալեւսկի: 18. Վարգ: 20. Կեչի: 21. «Օկա»: 23. Բանիմաց: 25. Չաֆ: 27. Գալուա: 28. Ուստին: 30. Կաղ: 32. Ռուսաստանցի: 33. Արմաղանյան: 34. Նաս: 36. Դրամա: 37. Նեղուկ: 38. Անի: 40. Կտրվածք: 43. Կալ: 44. Գունդ: 46. Բոռն: 48. Եղիազարով: 50. Բեկալ: 51. Ամոսով: 52. Արվակ: 53. Գորկի: 55. Ակրաս: 56. Եռակցում:



Հաջորդ մրցանակային խաչբառը կտպագրվի «Ազգի» հուլիսի 3-ի համարում:

Փորձե՛ք լուծել, եւ արժեքավոր մրցանակը ձե՛զ է:

Ուղղահայաց

1. Հայ փիլիսոփա: 2. V դ. հայ պատմագիր, պատմահայր: 3. Ֆրանսիացի նկարիչ, քանդակագործ (1869–1954): 4. Առանց ամոթի կամ ուրախ, պայծառ: 5. VII դարի հայ գիտնական, մաթեմատիկոս, աստղագետ, տոմարագետ: 6. Օրգանական նյութ, հետերոցիկլային միացություն: բնորոշ քաղցրավուն հոտով անգույն հեղուկ: Անջատվում է քարածխի խեժից: 9. Հնում օգտագործվող պաշտպանական զենք: 10. 8 տողից բաղկացած բանաստեղծական տուն: 16. Գերմանացի իդեալիստ փիլիսոփա: 17. Իտալացի փիլիսոփա, աստղագետ, բանաստեղծ (1548–1600): 21. Արաբական թերակղզում ապրող հիմնական ժողովրդի լեզուն: 23. Հայ մաթեմատիկոս: 24. Շ. Թաքի կյանի «Բալենի» վեպի գլխավոր հերոսը: 25. Վարդագգիների ընտանիքի սալորենու ցեղի բույս: 26. Անսանձ, կատաղի, ... 27. Գյուղ Հայաստանում, Աշտարակից հյուսիս-արեւմուտք: 31. Շենքի կիսաբոլորաձեւ ելուստ: 32. Ourոյենի թագավորության բոլոր գահակալների անունը:

Հորիզոնական

7. Սիյուռխահայ օպերային երգիչ (բաս, ծնվել է Թբիլիսիում): 8. Լսարանում դասախոսություն կամ զեկուցում լսող անձ: 11. Մարմնամարզական վարժությունների ամբողջությունը: 12. Պողպատե գործիք, որը տիկնոջ մարմնի հարվածելիս որոշակի նորմալ բարձրության ձայն է հանում: 13. Դրամական միավոր: 14. Վախկոտ, բայց բախտը բերող մարդու կերպար հայ գրականության մեջ: 15. Փիլիսոփայական կատեգորիա, նաեւ պատվանդան, խարիսխ, հիմք: 18. Աղենի նյութ թեռակղզու ամենամեծ գետը: 19. Սիյուռխահայ նկարիչ (Արմենակ Միսիրյան իսկական անուն ազգանունով): 20. Նավթամթերքի չափման միավոր: 22. Ամոց Լեռնային Կիլիկիայում: 28. Եղջերուների ցեղի կենդանի: 29. Բուսական ծագում ունեցող մագի ներկ: 30. Քաղաք Իրանի հարավում, Կարուն գետի ափին: 33. Գերմանացի մատերիալիստ փիլիսոփա: 34. Կուբայական դար եւ երգ: Առավել հայտնի է «դանա» անվանումով: 35. Դ. Վառուժանի «Հարճը» պոեմի հերոսուհին: 36. Դաշնակցական գործիչ, 1920 թ. Հայաստանի ազգային նախարար:

Կազմեց Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ
Օրվա հեռագիր

ՈՒՂԵՐՁ ԶԼ ԵԼՈՒԱԳԱՇԻՆ

Մադլեն Օլբրայթը խրախուսում է (կամ՝ խթանում) Հայաստանի անցումը ժողովրդավարության

ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթն ուղերձ է հղել նախագահ Ռոբերտ Քոչարյանին, տեղեկացնում է ՀՀ նախագահի մամլո քարտուղարը: Վաշինգտոնում կայացած կովկասյան պետությունների ղեկավարների հանդիպումը գնահատելով խիստ օգտակար, նա ընդգծել է, որ այն տարածաշրջանային խաղաղության եւ տնտեսական համագործակցության կարեւոր առաջընթաց է: «Այս հաջողությունը, նշվում է ուղերձում, ինչպես նաեւ իմ երկկողմ հանդիպումները Ձեր եւ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հետ, ցույց են տալիս, որ առաջընթացի համար կան իրական նախադրյալներ»: Մադլեն Օլբրայթը ցանկություն է հայտնել իրագործել այն գաղափարները, որոնց մասին խոսվել է այդ հանդիպումների ժամանակ եւ հնարավորինս արագ դրանք տեղափոխել գործնական հարթություն: Նա եւս մեկ անգամ ընդգծել է ԼՂ հակամարտության ԵԱՀԿ Մինսկի խմբի առած առաջարկությունների վրա հիմնված համընդգրկուն եւ երկարաձգված լուծման անհրաժեշտությունը:

ԱՄՆ պետքարտուղարը ողջունել է նաեւ ՆԱՏՕ-ի 50-ամյակի գագաթաժողովում նախագահ Ռոբերտ Քոչարյանի այն հայտարարությունները, թե ժողովրդավարական առաջընթացը կառուցված է տարածաշրջանի խաղաղության եւ կայունության հետ:

Անդրադառնալով մայիսի 30-ին Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրություններին, Մադլեն Օլբրայթը նշում է, որ դրանք «ցույց տվեցին գործընթացի բարելավում», եւ շնորհավորում է հանրապետության նախագահին այդ առթիվ: Նրա խոսքերով, օտարերկրյա դիտորդները, ներառյալ նաեւ ԵԱՀԿ դիտորդական առաքելությունը, որոշ առաջարկություններ են արել ընտրական գործընթացի բարելավման վերաբերյալ:

Ավարտելով ուղերձն ԱՄՆ պետքարտուղարը նշում է. «Մենք ակնկալում ենք աշխատել Ձեր եւ Ձեր երկրի ժողովրդի հետ խթանելու Հայաստանի անցումը դեպի ժողովրդավարություն»:

«Ուրարտու» գարեջուրը փոփոխում է տիրանալ «Կիլիկիայի» դափնիներին

«Մեր» մրցակցությունն գարեջրի շուկայում

Երեւանյան գարեջրի շուկան վերջերս հարստացավ եւս մեկ գարեջրատեսակով, որը դեռ խորհրդային ժամանակներից հայտնի «Ուրարտու» անունն է կրում, իսկ արտադրողը «Կոտայքի» գարեջրի գործարանն է: Ողջունելի էր, եթե չլիներ տարօրինակ մի հանգամանք. «Ուրարտուի» արտադրումը, առեւտրային նիշը ոտնահարում է նույն գործարանի «Կիլիկիա» գործարանի առեւտրանիշը: Նույնն են եւ թագը, եւ անգլերեն դեղնանարնջագույն «գարեջուր» գրառեսակը, որի տակ գրված է. «Մեր» խորհրդանիշ գարեջուրը, որ դեռ խորհրդային ժամանակներից հայտնի «Ուրարտու» անունն է կրում, իսկ արտադրողը «Կոտայքի» գարեջրի գործարանն է: Ողջունելի էր, եթե չլիներ տարօրինակ մի հանգամանք. «Ուրարտուի» արտադրումը, առեւտրային նիշը ոտնահարում է նույն գործարանի «Կիլիկիա» գործարանի առեւտրանիշը: Նույնն են եւ թագը, եւ անգլերեն դեղնանարնջագույն «գարեջուր» գրառեսակը, որի տակ գրված է. «Մեր» խորհրդանիշ